

Մոնթրեալի Սուրբ Յակոբ Ազգ. վարժարանի «Վ. եւ Ա. Սարաֆեան» նախակրթարանի եւ «Բաստրմանեան» երկրորդականի վկայականաց բաշխման հանդիսություններ

30-րդ հունձք



Կարդալ էջ 4

Նախարար Ծարպոնո, Լաւալի քաղաքապետ Տեմերս եւ այլ պաշտօնատարներ այցելեցին Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ քերմէս

Շաբաթ, 23 Յունիս 2018–ին, երեկոյեան ժամը 6:30–էն սկսեալ, Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ տօնավաճառ–քերմէս այցելեցին դաշնակցային, նահանգային եւ քաղաքապետական մակարդակի զանազան պաշտօնատարներ: Պաշտօնական այս հիւրերու շարքին էին Քեպէզի տարեցներու հարցերու եւ Լաւալ չըջանի պատասխանատու նախարար Յրանսին Շարպոնո, Լաւալի քաղաքապետ Մարք Տեմերս, դաշնակցային երեսփոխաններ Ֆայալ Էլ–Սուրի (Laval–les–Iles), Նաւիմի (Vimy) եւ Իվ Ռոպիյար (Marc–Aurèle–Fortin), նահանգային երեսփոխաններ Կի Ուելէթ (Chomedey), Սոլ Փոլօ (Laval–des–Rapides) եւ Մոնիք Սովէ (Fabre), Լաւալի քաղաքապետական խորհուրդի անդամներ Արամ Էլակէօզ (Renaud), Միշէլ Փուսսան (Vimont), Տէյվիտ Տէ Գոթիս (St–Bruno), Ժոսլին Ֆրէտէրիք Կոթիէ (Auteuil), Սանտրա Էլ–Հըլու (Souvenir–Labelle), Ակլայա Ռեւելաքիս (Chomedey), Ռէյ Սալիլ (Sainte–Dorothée), Նիգորաս Պորն (Laval–les Iles), Նանիք Լանկլուա (Orée–des–Bois) եւ Վիրժինի Տիւֆուր (Sainte–Rose):

Հիւրերը դիմաւորեցին Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամներ, ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի, Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան եւ Հայ Դատի յանձնախումբի անդամներ:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Լաւալի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Յովիկ Թիւֆէնքճեան, որ ողջունեց ներկաները եւ բարձր գնահատեց ներկայ պաշտօնատարներուն քաջալերանքը հայկական նախաձեռնութիւններուն, որմէ ետք նախարար Շարպոնո խօսք առնելով շնորհակտեց ներկաները Քեպէզի ազգային տօնին ու Հայաստանի Հանրապետութեան 100–ամեակին զոյգ առիթներով: Իր կարգին, քաղաքապետ Տեմերս, իր ելոյթին ընթացքին շեշտեց լաւալահայութեան ներդրումը Լաւալի բարգաւաճումին եւ յառաջդիմութեան գործընթացին մէջ:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որմէ ետք հիւրերը մօտաւորապէս մէկ ժամ վայելեցին քերմեսի ճոխ մթնոլորտը:

Վազգէն Գարագաշեան





2018 PILOT

MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal–Nord, QC H1G 6C4

514 327-7777

www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian



HONDA



The Essence of Mediterranean Gourmet



*Taste Wonderful
Taste Arz Fine Foods*



ARZ Fine Foods

1909 Lawrence Ave E, Scarborough, ON (416•755•5084), www.arzfinefoods.com

Համագգայինի «Սանահին» մասնաճիւղի խմբային գրական ձեռնարկ

Կազմակերպութեամբ Համագգայինի Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան «Սանահին» մասնաճիւղին, Հինգշաբթի, 24 Մայիս 2018-ի երեկոյեան, Լաւալի Հայ Կեդրոնի «Պարոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ գրական երեկոյ մը, մասնակցութեամբ մոնթրէալահայ չորս գրողներու՝ Վրէժ-Արմէն Արթինեանի, Անդրանիկ Պետրոսեանի, Հայդուկ Շամլեանի եւ Թալին Լատոյեանի:

«Սանահին» մասնաճիւղի վարչութեան անդամ Նանոր Աշնա Մնայեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ներկայացուց գրական հանգիւման նպատակը, որն էր ներկայացնել մոնթրէալահայ չորս հեղինակները եւ անոնց գործերը հանրութեան, անշուշտ առիթը ստեղծելով նաեւ անոնց աշխատանքը գնահատելու:

Տիկին Մնայեան նախ ներկայացուց պարոն Անդրանիկ Պետրոսեանը, որմէ ետք զինք հրաւիրեց ներկայացնելու համար իր «Հայ-թրքական հիմնախնդիրը» գիրքը: Պարոն Պետրոսեան ծանօթացուց իր ուսումնասիրութիւնը, որուն մէջ քննական վերլուծութեան կ'ենթարկէ 2001-ին Թուրք-Հայկական Հաշտեցման Յանձնաժողովի գործունէութիւնն ու գաղափարախօսական հիմքը: Ան եզրակացուց, թէ Հայ-թրքական հիմնախնդրի խաղաղ կարգաւորման նախընտրելի միջոցն է երկու ժողովուրդներու քաղաքացիական հասարակութիւններու միջեւ երկխօսութիւնը, որ կարելի է զարգացնել արուեստի եւ գրականութեան ճամբով: Տեղին է նշել, թէ պարոն Պետրոսեան այս գիրքը նուիրած է իր սիրելի տիկնոջ՝ Նաթանի Թէմիզեանի անմոռաց յիշատակին:

Երկրորդ հեղինակն էր՝ պարոն Հայդուկ Շամլեանը, որուն կենսագրու-

թիւնը լսելէ ետք, ներկաները, շնորհիւ Շամլեանի «Դէպի ժողով» եւ «Շ» գիրքերուն, նախ փոխադրուեցան Լիբանան (Արեւմտեան Պէյրութ), որմէ ետք Շուշի: Շամլեան արագօրէն անդրադարձաւ ցարդ իր գրած մնացած գիրքերուն՝ «Անվերադարձ»ին, «Անփոխադարձ»ին եւ «Opération Torréfaction»ին:

Տիկին Թալին Լատոյեանն էր գրական երեկոյին յաջորդ գրողը: Մնայեան կարդալէ ետք անոր կենսագրութիւնը, բարձրաստի փոխանցեց անոր, որ ներկայացնէ «Բալենին» գիրքը: Լատոյեան ներկայացուց գիրքը եւ անոր փոխանցող պատգամը, որ ուղղուած է յատուկ խնամքի կարիք ունեցող փոքրիկներուն, անոնց ծնողներուն եւ անմիջական շրջանակին:

Պարոն Վրէժ-Արմէն Արթինեանը երեկոյի չորրորդ հեղինակն էր: Անոր կենսագրութիւնը կարդալէ ետք տիկին Մնայեան հրաւիրեց զայն՝ ներկայացնելու իր գիրքերը: Պարոն Արթինեան համառօտ ձեւով ներկայացուց իր 4 գիրքերը. «Ոստայն 8 — Ճանապարհներ», «Ոստայն 7 — Համաստեղութիւն», «Ոստայն 6 — Ժամադարավայր», եւ «Ոստայն 5 — Նամակապատում»: Պարոն Արթինեան իր «Նամակապատում» գիրքէն Յակոբ Կարապետեանի հետ իր ունեցած նամակագրութիւններէն հատուածներ կարդաց ներկաներուն: Ան նաեւ ներկաներուն հետ բաժնեկցեցաւ իր հրատարակած նորագոյն «Ճանապարհներ» գիրքէն հաճելի պատմուածք մը:

Յայտագրին ընթացքը հետաքրքրական էր, այն իմաստով որ լսելէ ետք իւրաքանչիւր հեղինակի կենսագրութիւնն ու գիրքի կամ գիրքերու ներկայացումը, ներկաները նաեւ ունկնդրեցին հետաքրքրականը այն էր, որ Պետրոսե-



եանն ու Արթինեանը ընտրած էին նոյն երգը՝ «Սարգարապատ»ի երգը, ինչ որ հաւաքոյթը համագրողին գրած էր այլ երգ մը ընտրելու հարկադրանքին տակ: Որպէս այլընտրանք, ներկաները առիթը ունեցան ունկնդրելու Վարդուհի Վարդանեանի «Կարօտ» երգը: Հայդուկ Շամլեան ընտրած էր Յարութ Փամպուքճեանի «Վանք» երգը (1975), իսկ Թալին Լատոյեանը՝ «Ծաղկած բալենի»ն:

Հետաքրքրական եւ հարուստ այս գրական երեկոյին ներկայ էին տարբեր տարիքի մոնթրէալահայեր, բոլորն ալ

մեծ հետաքրքրութեամբ լսեցին հեղինակներուն ներկայացումները, յայտագրի աւարտին հարցումներ ուղղելով անոնցմէ ոմանց: Իսկ սրահէն ներս դուրս սուրճի եւ կարկանդակներու սեղանը յատուկ մտերմութիւն մը ստեղծեց ներկաներուն եւ գրողներուն միջեւ:

Յատուկ շնորհակալութիւն Համագգայինի «Սանահին» մասնաճիւղի վարչութեան, յատկապէս Նանոր Աշնա Մնայեանին՝ այս գրական եւ երաժշտական գեղեցիկ երեկոյին համար:

Թ.Լ.

Տոքթ. Ժիրայր Պասմաճեանի գեղարուեստի գործերու ցուցահանդէս



Ուրբաթ, 15 Յունիս 2018-ին, հովանաւորութեամբ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Զարեանի, կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանի եւ Համագգայինի Շրջանային վարչութեան, տեղի ունեցաւ տոքթ. Ժիրայր Պասմաճեանի գեղարուեստի գործերու ցուցահանդէսը, Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահէն ներս:

Այցելեցէք **hitunes.ca** կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցէք **triktrak.ca** կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շախմատի հարցազրոյցներ

TRIKTRAK.CA

Ghadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	BAKERY AND FINE FOODS OPEN 7 DAYS A WEEK! WEDNESDAYS 9 am - 7 pm SATURDAYS 8 AM - 6 PM SUNDAYS 8 AM - 5 PM LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN	Noor Fine Food Gourmet Mediterranean Cuisine 1 High Meadow Place, Unit 9 Toronto, Ontario M9L 2Z5 Tel 416 745 3111 Fax 416 745 9337
ANI Ristorante 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
Crown Pastries Fine Middle Eastern Pastries 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden) Toronto ON, M1R 2Z5 Tel 647.351.2015 www.crownpastriesbaklava.com	I.D.A. Part of the Shaw family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

Մոնթթեալի Սուրբ Յակոբ Ազգ. վարժարանի «Վ. եւ Ա. Սարաֆեան» Գախակրթարանի եւ «Բաատրմաճեան» երկրորդականի վկայականաց բաշխման հանդիսութիւններ

Սուրբ Յակոբ Ազգային վարժա-րանի «Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆ-եան» նախակրթարանի Զ. կարգի աշա-կերտներուն վկայականներու բաշխումի հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 10 Յունիս 2018-ին, կ.ե. ժամը 3-ին, Հայ կեդրոնի ՀՄԸՄ- Կամքի «Հայկ Մար-գարեան» մարզասրահէն ներս: Հանդէ-սին ներկայ էին յարգարժան հիւրեր՝ Գերաշնորհ Տ. Սուրէն Սրբ. Արք. Գաթա-րոյեան՝ հոգեւոր տեսուչ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ, Ար-ժանապատիւ Տէր Գառնիկ Ա. Քհն. Գո-յունեան եւ Ս. Գէորգ Հայց. Առաքելա-կան եկեղեցւոյ Հոգաբարձութեան ան-դամներ, Կրթական խորհուրդի, միու-թիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ներկայ էին նաեւ բարերարներ, պարգեւներ եւ մրցանակ-ներ տուող հաստատութիւններու ներկա-յացուցիչներ, ուսուցչական կազմի ան-դամներ եւ ծնողներ:

Գանատայի եւ Հայաստանի օրհ-ներգներուն յաջորդեց աշակերտներուն մուտքը, որմէ ետք գեղարուեստական յայտագիր մը ներկայացուեցաւ տիկին Դալար Հարպոյեան- Գալլօղլեանի եւ տիկին Սոնիա Քիլէճեանի ղեկավարու-թեամբ:

Առաջին հերթին Եսենիա Քէլլէեան ասմունքեց Զահրատի «Չար բաներ»ը, վեցերորդ դասարանէն խումբ մը աշա-կերտներ երգեցին եւ նուագեցին՝ «Donna Nobis Pacem», «Le jazz et la Java», «Հայկական մեղեդիներու փունջ մը», Ալ-լա Լիւտեանի «Գնա՝ ու կուռիք»ը՝ սրին-գի վրայ: Ապա տիկին Սոնիա Քիլէճեանի աշակերտները խմբովին արտասանեցին Համաստեղի «Հայու Ոգին»:

Գեղարուեստական բաժինէն ետք խօսք առաւ վարժարանի ընդհանուր տնօրէնուհի տիկին Լենա Գատեանը, որ նչեց. «Ձեր դպրոցական ծրագիրը Quebec-ի պետական ծրասդիրն է, բացի հայկական դասընթացներէն, որոնք շատ աւելի կը զարգացնեն ձեր անձը եւ հայ ինքնութիւնը: Դուք պիտի դիմէք նոյն քննութիւնները, ինչպէս այլ դպրոցներ, որովհետեւ տնօրէնութիւնը պիտի գնէ «Fédération des établissements d’enseignement privé»-ի քննութիւններ: Դուք պատրաստ էք, սի-րելի՛ աշակերտ-աշակերտուհիներ, բարձ-րանալու դէպի երկրորդական եւ դի-մագրաւելու պատանեկութեան բոլոր մարտահրաւէրները, որովհետեւ տակա-ւին ձեր տան մէջ պիտի գտնուիք՝ շրջա-պատուած ձեզի ծանօթ դէմքերով եւ ձեզ սիրող անձնակազմով»:

Տիկ. Լենա Գատեան իր խօսքին մէջ նաեւ շեշտեց, թէ «պէտք չէ մոռնաք ձեր դպրոցին արժէքները եւ քաղաքավար ու

տիպար հայ եւ քրիստոնեայ աշակերտին կեցուացքն ու վարուելակերպը»:

Վկայագրերու եւ մրցանակներու բաշխումը կատարեցին Ընդհանուր տնօ-րէնուհի տիկ. Լենա Գատեան եւ տիկին Կասիա Լախոյեան (ամբողջական ցանկը տեսնել ստորեւ):

Փակման խօսքը կատարեց Գերշ. Տ. Բաբգէն Սրբ. Արք. Չարեան, որ անդրա-դարձաւ հայկական դպրոցի կատարած էական դերին եւ ապա տուաւ իր օրհնու-թիւնը:

Աւելի ուշ շրջանաւարտները ունե-ցան խրախճանք-պարահանդէս մը, ըն-կերակցութեամբ իրենց ծնողներուն եւ հարազատներուն, ինչպէս նաեւ տնօրէ-նութեան, ուսուցչական կազմին եւ վար-ժարանի անձնակազմին, «Embassy Plaza» հիւրասրահին մէջ, երգով ու պա-րով, սահիկներու ցուցադրութեամբ եւ ճով մթնոլորտով երեկոյ մը անցուցին:

Իսկ Սուրբ Յակոբ Ազգային վար-ժարանի «Բաատրմաճեան» երկրորդակա-նի Ե. կարգի աշակերտներուն վկայա-կաններու բաշխման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 17 Յունիս 2018-ին, ժամը 3-ին, Հայ կեդրոնի ՀՄԸՄ- Կամք «Հայկ Մարգարեան» մարզասրա-հէն ներս: Հանդէսին ներկայ էին յար-գարժան հիւրեր՝ Գերաշնորհ Տէր Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան՝ Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, Արժանապա-տիւ Տէր Գառնիկ Աւգ. Քհն. Գոյունեան եւ Ս. Գէորգ Հայց. Առաքելական եկե-ղեցւոյ Հոգաբարձութեան անդամներ, Կրթական խորհուրդի, միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացու-ցիչներ: Ներկայ էին նաեւ բարերարներ, պարգեւներ եւ մրցանակներ տուող հաս-տատութիւններու ներկայացուցիչներ, ուսուցչական կազմի անդամներ եւ ծնողներ:

Գանատայի եւ Հայաստանի օրհ-ներգներուն յաջորդեց աւարտական դա-սարանի 55 աշակերտներու մուտքը, որմէ ետք հանդիսութեան բացման խօսքը կա-տարեց օրուան հանդիսավար պրն. Մհեր Գարադաշեան: Ան իր խօսքին մէջ յայտ-նեց. «Ամէն մարդ չէ, որ կրնայ ըսել, թէ Ս. Յակոբ վարժարանը յաճախած է եւ՝ Ս. Յակոբ վարժարանը աւարտած: Մեր շրջանաւարտները պէտք է գիտակից ըլ-լան իրենց դպրոցին արժէքին եւ երախ-տապարտ՝ իրենց ծնողներուն, որոնք զի-րենք ուղարկեցին այս վարժարանը, ուր ստացան որակաւոր ուսում եւ հայեցի դաստիարակութիւն»:

Հանդիսութեան գեղարուեստական յայտագիրը սկսաւ «Ահա մեր դպրոցը» տեսերիգի ցուցադրութեամբ, պատրաստ-ուած Աւօ Մէշէֆէճեանի եւ Հայկ Թիմ-պօլ Ասրապեանի կողմէ, ապա Միրիամ

Քէսէեան-Թովմասեան ասմունքեց «Ու-սուցիչներ, խոնարհու՛մ եմ ձեր առջեւ» Կորիւն Առաքելեանէն եւ Արամայիս Սահակեանէն համադրուած կտորը, իսկ Լորիկ Պէրպէրեանը երգեց Գուսան Հայ-կազունի «Պիտի գնանք» երգը:

Գեղարուեստական բաժինէն ետք, հայերէնով խօսք առին Ալինա Սեփեթճ-եան եւ Նատիա Սիուֆի, որմէ ետք Փրանսերէնով խօսք առին Լոռի Ճապ-րայեան եւ Մայքըլ Թահուլաքեան, որոնք յիշեցին իրենց անցուցած օրերէն հաճելի դէպքեր եւ շնորհակալութիւն յայտնեցին իրենց ուսուցիչներուն:

Ապա խօսք առաւ վարժարանի ընդհանուր տնօրէնուհի տիկին Լենա Գատեանը, որ նչեց Ս. Յակոբ վարժարա-նի իւրայատկութիւնը Գանատայի եւ յատկապէս Քեպէգի մէջ: Ան ըսաւ. «Մանկութենէն հազիւ բաժնուած՝ կեր-տեցիք ձեր ինքնութիւնը, զօրացուցիք հայրենիքի հանդէպ ունեցած ձեր սէրը եւ վայելեցիք հայկական մթնոլորտը: Դուք փաստեցիք ձեր հայասիրութիւնը եւ մէկ ազգի պատկանելիութիւնը, երբ ձեր ձեռքերն ու սրտերը լայն բացիք՝ ընդունելու համար ձեր սուրիահայ ըն-կեր-ընկերուհիները»:

Խօսքին մէջ տիկ. Գատեան յա-տուկ գնահատանքի արժանացուց Ծնո-ղաց յանձնախումբը, որոնք եղան տնօ-րէնութեան աջ բազուկը եւ սրտանց աշ-խատեցան վարժարանիս բարելաւման համար: Յատուկ շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ծնողական յանձնա-խումբի անդամ տէր եւ տիկ. Ճորճ եւ Լիզա Եաղճեաններուն, որոնք ամէն տարի սիրայօժար կը նուիրեն հանդէսի տոմսակները եւ Ծնողականի ատենապե-

Պարգեւներ եւ մրցանակներ. նախակրթարան

- Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի՝ Եսենիա Քէլլէեան:
- Պոլսահայ Միութեան՝ Միքայէլ Մանուչարեան եւ Արենի Փիլիպոսեան:
- ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի՝ Օլիվիա Ճէլաֆիբեան:
- ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղի՝ Արենի Փիլիպոսեան, Սեւակ Ղազարեան եւ Կրէյս Սաղըբեան:
- ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան Մհեր Չուլհաճեան Յոնտի՝ Դրօ Գա-լուստեան:
- ՀՄԸՄ- Կամք մասնաճիւղի վարչութեան՝ Միլանա Ճապրայեան:
- Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հովիւրին ու Հոգաբարձութեան՝ Մհեր Խաշիշեան, Ալիք Ճապարեան, Լոռի Օլթաճի եւ Սուսաննա Արմաղանեան:

Երկրորդական

- Համազգայինի Շրջանային վարչութեան եւ Մոնթրէալի «Սանահին» մասնա-ճիւղի վարչութեան՝ Մայքըլ Թահուլաքեան եւ Ալինա Սեփեթճեան:
- Լաւալի Ս. Գէորգ Հայց. Առաք. եկեղեցւոյ Հոգաբարձութեան՝ Մայքըլ Թահու-լաքեան եւ Լոռի Ճապրայեան:
- Մրցանակ ի յիշատակ Սարգիս Ղազարեանի՝ Մայքըլ Թահուլաքեան, Նատիա Սիուֆի, Տեսիլ Մելեքեան, Թամար Կէտիկեան եւ Սէրլի Պետրեան:
- Մրցանակ ի յիշատակ Մարիամ եւ Ղազար Ղազարեաններու՝ Նատիա Սիուֆի:
- ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի՝ Նայիրի Սապա:
- ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի՝ Ալինա Սեփեթճեան եւ Լոռի Ճապրայ-եան:
- ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան՝ Ինէսա Գալանտարեան:
- ՀՅԴ Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան՝ Նատիա Սիուֆի, Լոռի Ճապրայեան եւ Արեգ Աբրահամեան:
- Գանատայի հայ առեւտրականներու խորհուրդի՝ Մայքըլ Թահուլաքեան եւ Նատիա Սիուֆի:
- Գանատայի հայ առեւտրականներու խորհուրդի՝ Թալին Տօնոյեան եւ Ինէսա Գալանտարեան:
- Գանատայի հայ առեւտրականներու խորհուրդի՝ Աւօ Մէշէֆէճեան եւ Հայկ Թիմպօլ Ասրապեան:
- Պարգեւ՝ տրամադրուած բժիշկ եւ տիկ. Փիէո Ասլանեանի կողմէ, իրենց հայան-ուէր մեծ մօր՝ Վիգթորիա Աբգարեանի, Մայքըլ Թահուլաքեան:
- McGill համալսարանի՝ Մայքըլ Թահուլաքեան եւ Ալինա Սեփեթճեան:
- Պարգեւ, տրամադրուած Քեպէգի Հայ Բժիշկներու Ընկերակցութեան (AMAQ) կողմէ՝ Մայքըլ Թահուլաքեան:
- Պարգեւ, տրամադրուած տէր եւ տիկ. Սերժ եւ Ալիս Ռափարի Մոմճեանի կողմէ՝ Մայքըլ Թահուլաքեան եւ Սինթիա Աուէտ:
- Բժիշկ Կարպիս Հարպոյեանի կողմէ՝ Ալինա Սեփեթճեան, Նատիա Սիուֆի, Վանա Տէմիրճեան, Սինթիա Աուէտ, Մայքըլ Թահուլաքեան, Գէորգ Սապա, Յուրի Անթապի, Մաթիու Ժիկերսըզեան, Նանոր Շահինեան, Դանիէլ Սաղըրեան եւ Լոռի Ճապրայեան:
- Պրն. Վրէժ-Արմէն Արթինեանի կողմէ՝ Լորիկ Կարապետ եւ Նատիա Սիուֆի:
- Վարժարանիս ընդհանուր տնօրէնուհիին կողմէ՝ Գէորգ Սապա եւ Նատիա Սիուֆի:
- Médaille du Gouverneur général-ի՝ Մայքըլ Թահուլաքեան:

տուհի տիկ. Գարոլին Խոզոզեանին եւ ամբողջ յանձնախումբին՝ խրախճանքի սրահին դասաւորման համար: Ան շնոր-հակալութիւն յայտնեց նաեւ տէր եւ տի-կին Տօնոյեաններուն, որոնք բեմին զար-դարանքը հոգացին: Ան յաջողութիւն մաղթեց բոլոր շրջանաւարտներուն, որոնք ընդունուած են բարձրագոյն ուսման հաստաութիւններու մէջ:

Վկայագրերու եւ մրցանակներու բաշխումը կատարեցին ընդհանուր տնօ-րէնուհի տիկ. Լենա Գատեան եւ փոխ-տնօրէնուհի օրդ. Լոռի Ապրաքեան (ամ-բողջական ցանկը տեսնել ստորեւ):

Հանդիսութեան փակման խօսքը կատարեց Գերաշնորհ Տ. Բաբգէն Սրբ. Արք. Չարեան՝ Թեմակալ Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, որ մեծապէս գնահատեց վարժարանի տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը եւ շեշտեց, որ այն ինչ որ կը ցանեն այդ ալ կը հնձեն, հայկական ոգին կը ցանեն, ապա հայ մարդը կը հնձեն: Մեծապէս գնահատեց եւ շնորհաւորեց նաեւ մեր շրջանաւարտ-ներն ու անոնց ծնողները:

Մայքըլ Թահուլաքեան շրջանա-ւարտ բոլոր աշակերտներուն կողմէ ծաղ-կեփուեջ մը փոխանցեց տիկին Լենա Գատեանին՝ հանգստեան կոչուելուն առիթով, որ իր կարգին զայն նուիրեց օրդ. Լոռի Ապրաքեանին, իբր խորհրդա-նիշ դպրոցին ջահի փոխանցման:

Աւելի ուշ, Լաւալի «Embassy plaza»ի շքեղ ճաշասրահին մէջ տեղի ունեցաւ խրախճանք-պարահանդէս մը, շրջանաւարտներուն, իրենց ծնողներուն, հարազատներուն, տնօրէնութեան, ու-սուցչական կազմին եւ վարժարանի անձնակազմին մասնակցութեամբ:

Փոքրերու պատմութեան ժամ



Ուրբաթ, 18 Մայիս 2018-ին տեղի ունեցաւ Համագգայինի «Սանահին» մասնաճիւղի «Գիրքը՝ մեր ընկերը, պատմութիւնը՝ մեր երեւակայութիւնը» նշանաբանով «Փոքրերու պատմութեան ժամ»-ի հերթական հաւաքը: Եօթը փոքրիկներ հետաքրքրութեամբ ունկնդրեցին Յարութի Կիւլոյեանի ներկայացուցած պատմութիւնը՝ Tony Ciango-ի «Անձրեւի հրեշտակը»:

Պատմութեան առաջ ներկայանալու անսահման կարելիութիւններուն եւ իրենց երեւակայութեան տեղի տալով, բոլոր փոքրիկները, Պատմութեան ժամի պատասխանատու Մեղրի Պագարեանի ցուցմունքներուն հետեւելով, գոյնզգոյն թղթիկներով գրքոյկ կազմեցին: Ապա գրքոյկի իւրաքանչիւր էջին վրայ իրենց գծած պատկերացումներով հեքիաթ պատմողի իրենց անդրանիկ փորձերը կատարեցին: Պատմութեան վերնագիրը որոշելէ ետք, իւրաքանչիւր փոքրիկ իւրայատուկ գունագեղ էջերու միջոցաւ ներկայացուց իր պատկերացուցած դէպքը կամ ապրումները:

Յետոյ բոլորը գորգին վրայ իրենց տեղերը գրաւելէ ետք, Յարութի Կիւլոյեանի ներկայացմամբ, ունկնդրեցին, թէ ինչպէ՞ս «Քրիսի»՝ անձրեւի հրեշտակը, յաջողեցաւ ամպերէն անձրեւ տեղացնել, լիովին եւ հպարտօրէն կատարելով իրեն յանձնուած պարտականութիւնը: Ուշադրութեամբ եւ կեդրոնացումով ունկնդրելէ ետք Քրիսի հրեշտակին փորձութիւնները, փոքրիկները պատասխանեցին պատմողին հարցումներուն: Այսուհանդերձ անձրեւոտ օրերուն «Քրիսի հրեշտակ»ին առաքելութիւնը միշտ վառ պիտի մնայ փոքրիկներուն յիշողութեան մէջ: Հանդիպումին աւարտին պատմողը իւրաքանչիւրին բաժնեց հրեշտակէ զարդ մը:

Ռոզմարի Սահակեան

«Հորիզոն»ի ուսանողական վարժողական ծրագրի գործակատարն է Վազգէն Գարագաշեան



Գանատայի աշխատանքի եւ ընկերային զարգացման պետական գրասենեակին կողմէ տրամադրուած յատուկ ֆոնտով, «Հորիզոն» շաբաթաթերթը երրորդ տարին ըլլալով կը նախաձեռնէ ուսանողական վարժողական ծրագիր (Internship Program):

«Հորիզոն»ի խմբագրութեան ուղղուած 1 Մայիս 2018 թուակիր նամակով մը, Գանատայի ժառանգութեան նախարար Մելանի Ժոլի կը յայտնէր, թէ նախարարութիւնը գնահատելով «Հորիզոն» շաբաթաթերթի համագանատական բնոյթի տեղեկատուական եւ լրագրական տասնամեակներու աւանդը, վերստին կը հովանաւորէ ամառնային ուսանողական վարժողական ծրագիրը (Internship program):


2018 թուականի ուսանողական վարժողական ծրագրին համար դիմում կատարած թեկնածուներէն մոնթրէալահայ ուսանող Վազգէն Գարագաշեան ընտրուեցաւ ծրագրի գործակատար:

Ծրագրի գործակատարը «Հորիզոն»ի ամէնօրեայ խմբագրական աշխատանքներու ծիրէն ներս պիտի կատարէ թարգմանութիւններ, գաղութային ձեռնարկներու թղթակցութիւններ եւ հարցախոյզներ:

Վազգէն Գարագաշեան Ս. Յակոբ Ազգային վարժարանի չրջանաւարտ է: Անգամ է ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան: Ներկայիս կը յաճախէ Մոնթրէալի Պուա Տը Պուոն Գոլէճ:

Նշենք, որ 2016-ին եւ 2017-ին Գանատայի ժառանգութեան նախարարութեան կողմէ հովանաւորուած «Հորիզոն»ի վարժողական ծրագրի գործակատարները եղած են Ս. Յակոբ Ազգային վարժարանի չրջանաւարտներ Արին Տիմիթեանն ու Կորիւն Գոյունեանը, որոնք 6 շաբաթներու վրայ երկարող ծրագրի ընթացքին աշխատեցան «Հորիզոն»ի խմբագրական եւ վարչական բաժանմունքներուն մէջ եւ կարեւոր ներդրում ունեցան արխիւագրելու «Հորիզոն»ի 40 տարիներու թիւերը:

Կորիւն Գոյունեան, որ յառաջիկայ տարի պիտի տիրանայ Գոնգորտիա համալսարանի քաղաքական գիտութեանց պսակաւոր արուեստից վկայականին, երկու ամիսով կամաւորաբար պիտի աշխատակցի «Հորիզոն»ին:



Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեան Մէջ - Ի.

6. Տաճկահայաստանի Նահանգապետութիւնը

Ռուսական յեղափոխութիւնը իր որոշ վերաբերմունքը չունեցաւ Տաճկահայաստանի վերաբերմամբ։ Այդ անորոշ կացութիւնը վերացնելու համար, Դաշնակցութեան ականաւոր գործիչներէն Տոքթ. Զաւրեւ մեկնած էր Պետօկրատ՝ Կերենսկու ժամանակաւոր կառավարութեան որոշ առաջարկներ ներկայացնելու։ Տոքթ. Զաւրեւի աշխատանքները յանգեցան որոշ եզրակացութեան մը 1917–ի աշնան։ Կերենսկու ժամանակաւոր կառավարութիւնը որոշեց նկատել Տաճկահայաստանը մէկ ամբողջութիւն ինքնավար նահանգ մը, ռուսական տիրապետութեան տակ։ Տաճկահայաստանի ընդհանուր նահանգապետ նշանակուեցաւ Զօր. Աւերիանով օգնական՝ Տոքթ. Զաւրեւ։

Տաճկահայաստանը որքան ալ որպէս ամբողջութիւն, մէկ նահանգ մը կը նկատուէր ռուսական կառավարութեան աչքին, ներքնապէս բաժնուեցաւ չորս նահանգներու, Վասպուրականի, Տրապիզոնի, Էրզրումի եւ Տարօնի նահանգներու։ Այս վերջին նահանգին միացաւ Ալաշկերտի դաշար եւ Խնուսի գաւառը, որոնք Էրզրումի նահանգի մասերն էին։ Այս նահանգներու նահանգապետները կը նշանակուէին Զօր. Աւերիանովի եւ Զաւրեւի կողմէ։ Պէտք է ըսել, որ անոնք, չգիտեմ ինչ հաշուով, նախընտրութիւնը կուտային ռուսներուն, որոնք պաշտօնատուն մը կը հաստատէին Թիֆլիսի այսօինչ կամ այնիչէ փողոցին մէջ, բազմաթիւ պաշտօնեաներով. իսկ երկիրը, բարեբախտաբար, ունէր իր կառավարիչները, կամ այդ ռուս նահանգապետներու օգնականները, որոնք իսկական գործի վարողներն էին։ Քանի մը երկրորդական ռուս կառավարիչներ կ'ըլլէր գտնուէին Էրզրումի շրջաններու մէջ, ու բաւական անհամութիւններու տեղի կուտային։

Բնական է մէկ քանի ամսուայ ընթացքին կարելի չէր մաքրել Տաճկահայաստանը օտարազգի կառավարիչներէ, որոնք ռուսական տիրապետութեան հետ մէկտեղ հոն հաստատուած էին, եւ յեղափոխութեան հռչակման օրերէն սկսած, յեղափոխական բանակի կողմն անցած էին... որեւէ յեղափոխական կուսակցութեան անունն իրենց վրայ առնելով։ Սակայն կամաց կամաց առնք սկսած էին տեղի տալ եւ Տաճկահայաստանի կռավարական վարչութիւնը ամբողջովին կը հայանարՎասպուրականի եւ Տարօնի նահանգներու մէջ,գրեթէ, որեւէ օտար պաշտօնեայ գոյութիւն չունէր։ Բայց Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգներու պաշտօնէութիւնը տակաւին իր մէջ բազմաթիւ հին կառավարիչներ կը հաշուէր։

Այսպիսով, Տաճկահայաստանի այն հասարակական եւ կուսակցական մարմինների, որոնք ազգային վարչութիւններ էին՝ առանց պետական իշխանութեան, հիմա կը դառնային պետական օրգաններ, կառավարական բոլոր իրաւասութիւններով։ Մենք կը մտնէինք մեր բնական հունին մէջ, Հայերու ֆիզիքական եւ բարոյական ուժը յարաճուն կերպով կ'աւելնար. իսկ ցիրուցան քրդական եւ թրքական տարրերը տեղի կուտային, կը կծկուէին եւ ձեռնթափ կ'ըլլային որոշ յաւակնութիւններէ։

Սակայն այս աշխատանքներն իրենց սաղմնային վիճակի մէջն էին, երբ բռնկած էր հոկտեմբերի բոլշեւիկեան յեղափոխութիւնը, ստեղծելով ընդհանուր անիշխանութիւն մը։ Այդ պարագաներուն, երկրի իշխանութեան իրաւասութիւնները կը լայննային եւ ինքնաբերաբար կը հասնէին տեղ մը, ուր մենք ինքնաբերաբար անկախ էինք, տէր դառնալով ե՛ւ կառավարական, ե՛ւ գինուորական ե՛ւ տնտեսական բոլոր հաստատութիւններուն։

Զօր. Աւերիանովը եւ իր նշանակած նահանգապետները կը մնային Թիֆլիսի մէջ, որպէս Ռուսոյի անուանական շուքը։ Ռուսաստանը կը հեռանար մեր երկրէն։ Մենք ժառանգորդ կը մնայինք այն ամբողջ հարստութեան եւ ապարատին, որ Ռուսաստանը կը թողուր Տաճկահայաստանի ճակատներու վրայ։ Կովկասի մէջ, բացի գինուորական զօրաշարժէ, մտաւորականութեան եւ երիտասարդութեան զօրաշարժ յայտարարուեցաւ, ու հարկւրաւոր ու հազարաւոր նուիրուած ուժեր ձամբայ ինկան դէպի Տաճկահայաստան, միանալու այնտեղ գործող ուժերուն, դրութեան դիմագրաւելու համար։

Նոյեմբեր, դեկտեմբեր եւ յունվար ամիսները եռուն գործունէութեան, գինուորական ու վարչական կազմակերպութեան եւ ուժերու հաւաքման շրջան մը դարձան։ Բայց շէնքը այնքան մեծ էր, եւ կէս միլիոնի հասնող բանակի փլուզումը այնքան ցնցող, որ անկարելի էր ամուր շէնք կառուցանել՝ լքուած ամբողջ երկիրը կանգուն պահելու համար։

7. Ապահովութեան Խորհուրդը եւ Տաճկահայ Զօրքը


Տաճկահայաստանի նահանգապետութեան կզմակերպութեան նախնական աշխատանքները հաղիւ իրենց հունի մէջ մտած էին, երբ պայթեցաւ բոլշեւիկեան յեղափոխութիւնը։ Բոլշեւիկեան յեղափոխութիւնըհիմնապէս փոխեց Կովկասի եւ Տաճկահայաստանի կացութիւնը։ Առանց ուրիշ երեւոյթներու վրայ կանգ առնելու մանրամասն, կ'արժէ քանի մը խօսք ընել կովկասեան ճակատի ռուսական զօրքի մասին։ Ինչպէս ուրիշ ճակատներու, նոյնպէս կովկասեան ճակատի վրայ գտնուած ռուսական զօրքերու մէջ քննութեան նիւթ դարձած էր «հաշտութիւն առանց հողային գրաւումներու եւ առանց հատուցման» խնդիրը։ Լենինի տեսակէտները զօրքի մեծամասնութեան սրտին մօտիկ էին, որովհետեւ կարճ էին եւ հասկնալի.– «Կորչի՛ր պատերազմը. գինուորները դէպի իրենց տուները»։ Եւ զօրքը կ'ուզէր վերադառնալ իր տունը։

Բոլշեւիկեան յեղափոխութեան հետեւանքով Տաճկահայաստանի ճակատներու վրայ գտնուած ռուսական բանակը քաղքայուեցաւ եւ խառն ի խուռն դիմեց դէպի Ռուսաստան։ Ատիկա աներեւակայելի եւ աննկարագրելի խոշոր փլուզում մըն էր, որ հեղեղանման կ'անցնէր՝ աւերակներու կոյտեր թողնելով իր ետեւը։ Նոյ. Եւ դեկտ. Ամիսներու ընթացքին, կովկասեան ճակատի թէ՛ յառաջապահ եւ թէ՛ պահեստի ուժերը, որոնք կէս միլ. զօրք կը հաշուէին, հեռացան Տաճկահայաստանէն եւ Կովկասէն։ Անիշխանական ժամանակաշրջան մըն էր այդ. ամէն ոք կ'ուզէր պահպանել իր գոյութիւնը եւ օգտուել տիրող անիշխանութենէն։ Ռուսական զօրքը սկզբնական շրջանին բաւական սպառնալից էր. բայց կամաց կամաց թափը կտորեցաւ, եւ դէպի տուն նահանջողի իր հոգեբանութեամբ, սահմանափակուեցաւ երկաթուղային շրջաններու մէջ ու մտածեց օր առաջ տուն հասնիլ՝ գինաթափ ըլլալով ե՛ւ իրական զէնքերէն, ե՛ւ իշխանական հոգեբանութենէն։ Թաթարներն ու վրացիները ուրախ էին եւ պատեհութենէն օգտուելով, իրենց ապագայ պետութեան համար գինական եւ նւթական հարստութիւն կը դիզէին։ Հայերը մինակ մնալու վախէն կը ցաւէին Ռուսաստանի մեկնումը տեսնելով, եւ կը բաւականանային հարստութեան այն փշրանքներով որ կը մնային Կարսի, Ալէքսանդրապոլի եւ Երեւանի մէջ։

Կովկասեան երեք ազգերը, վրացիներ, թուրքեր եւ հայեր կը չղթայուէին իրարու՝ Կովկասի վարչական, միջնցեղային եւ քաղաքական հանգոյցաւոր շէնքին մէջ։ Վրացիները եւ թուրքերը որոշապէս գիտէին իրենց ընելիքը։ Իսկ հայերը սեփական ուղի չունէին։ Ռուսաստանը չկար. շատ շատ կրնային սպասել անոր գալուն, ինչ որ տեղի չունեցաւ ճակատագրական օրերուն։ Երբեմն, ճարահատօրէն, յոյս կապեցին Կովկասեան միութեան հետ. բան մը որ քաղքայուեցաւ երբ վտանգը մօտեցաւ հայերուն։ Վրացիները մնացին միշտ թուրքերուն կողմնակից։ Հայերն ու թուրքերը ընդհանուր լեզու չունէին։ Հայոց այս անորոշ վիճակը տեւեց բաւական երկար ժամանակ, երբ կեանքի դառն փորձէն եւ պատերազմի անողոք քուրայէն ստեղծուեցաւ հայոց հայրենիք մը իր սեփական իշխանութեամբ, կտրուած մնալով Թիֆլիսէն ու Բագուէն, որոնց մէջ կեդրոնացած կը մնային հայոց հասարակական հաստատութիւնները եւ հայոց ազգային կեդրոնները, առանց հող ունենալու իրենց ոտքերուն տակ։

Այս ամբողջ քաօսին մէջ, ամենէն ողբերգական վիճակը Տաճկահայաստանին բաժին կ'իյնար։ Շատ քիչներն էին, որ հոկտեմբերին կամ նոյեմբերին, իրենց մտքէն կ'անցնէին թէ՛ թուրքերը կրնան երբ եւ իցէ 1914–ի սահմաններն անցնիլ։

Ռուսական զօրքերու քաշուելով, թուրքերը տէր պիտի դառնային Տաճկահայաստանին։ Այդ պարագան մտահոգիչ էր ընդհանուր հայութեան եւ մասնաւորաբար՝ տաճկահայութեան համար։ Արեւմտահայ Բիւրօն, որ ընտրուած էր Տաճկահայ առաջին համագումարէն, քաղաքական իրաւունքներ չունէր. սակայն Ռուսաստանի վերիվայրումներըքաղաքական լարուած մթնոլորտ մը կը ստեղծէին Կովկասի եւ Տաճկահայաստանի մէջ, ու կը ստիպէին մեզ քաղաքականօրէն բեմ գալու։ Այդ իսկ պատճառներով Արեւմտահայ Բիւրոյի նախաձեռնութեամբ հրաւիրուեցաւ Տաճկահայերու քօնֆերանս մը, որ տեղի ունեցաւ 1917–ի դեկտեմբերի առաջին շաբթուն, Թիֆլիսի հայոց առաջնորդարանի մէջ։ Քօնֆերանսին կը մասնակցէին Արեւմտահայ կազմակերպուած մարմինները եւ զանազան հօսանքներու ներկայացուցիչները։



Քօնֆերանսի գլխաւոր օրակարգն էր, քաղաքական կացութիւնը եւ Տաճկահայաստանի ճակատներու պահպանումը։ Քօնֆերանսը դուրս եկաւ Արեւմտահայ առաջին համագումարի գծած սահմաններէն եւ վճռեց դառնալ քաղաքական ազգային մարմին մը, եւ մասնակցիլ այդ կարգի բոլոր աշխատանքներուն։ Այդպիսով Արեւմտահայ գաղթականական մարմինները կը լծուէին քաղաքական եւ գինուորական աշխատանքներու, ինչպէս որ այդ կը կատարուէր Տաճկահայաստանի նահանգներու մէջ, ու կը չղթայուէին նորակազմ Տաճկահայաստանի նահանգապետութեան։

Այդ ժողովի մէջ որոշուեցաւ հռչակել պարտադիր զօրակոչ եւ կազմակերպել Տաճկահայ զօրաբաժին մը, 20,000 զինուորներէ բաղկացած, որու անմիջական պարտականութիւնը պիտի ըլլար Տաճկահայաստանի սահմաններու պահպանումը։ Թեր ու դէմ կարծիքներէ յետոյ Անդրանիկը ընտրուեցաւ որպէս հրամանատար այդ նորակազմ բանակին։ Քօնֆերանսը բանակի կազմակերպման, եւ անոր բարոյական ու նւթական վերահսկողութեան գործը յանձնեց իրմէ բխած ութը հոգիինց մարմնի մը, որուն տրուեցաւ գինուորական եւ քաղաքական լայն իրաւունքներ։ Այդ մարմինը կոչուեցաւ Արեւմտահայ Ապահովութեան Խորհուրդ, որու անդամներն էին. Վ. Փափագեան (Դաշն.), Սեպուհ (Դաշն.), Յ. Ամատունի (Դաշն.), Ժ. Միրզախանյան (Հնչ.), Յ. Յակոբեան (Ռամ.), Ա. Թէրզիպաշեան (Ռամ.), Յ. Տէր Զաքարեան (Ռամ.), եւ Կ. Սասունի (Դաշն.)։

Տաճկահայաստանի նահանգապետութիւնը ստանձնեց հայթայթել գինուորական ծախքերը։ Ապահովութեան Խորհուրդը, նահանգապետ Զօր. Աւերիանով եւ Տօք. Զաւրեւ համախորհուրդ ձեռնարկեցին բանակի կազմակերպութեան։ Տօք. Զաւրեւի միջնորդութեամբ, կովկասեան բանակի ընդհանուր հրամանատարութիւնը, որ տակաւին ի զօրու էր եւ կը գտնուէր Սօց. Յեղափոխականներու ազդեցութեան տակ, Անդրանիկին տուաւ զօրավար տիտղոսը, որ ռուսական բանակի ըմբռնումներով, անհրաժեշտ էր 16–20,000 զինուորներէ բաղկացած զօրաբաժինի մը հրամանատարին համար։

Քօնֆերանսի պատգամաւորները մեկնեցան զանազան շրջաններ, եւ անմիջապէս կազմակերպեցին տեղական Ապահովութեան Խորհուրդներ, ու ձեռնարկեցին զօրահաւաքի։ Տաճկահայութիւնը, ինչպէս ըսած եմ նախորդ էջերու մէջ, բաժնուած էր երկու հատուածներու, Երկրի եւ Կովկասի։ Երկրի հատուածը արդէն քաղաքական կազմակերպութիւններ ունէր եւ գինուորական պարտաւորութիւններ կը կատարէր։ Ռուսական բանակի հեռանալով, մենք տէր կը դառնայինք գինուորական հսկայ հարստութիւններու եւ կը կշտանայինք զէնքէ։ տակաւին Արեւմտահայ քօնֆերանսը տեղի չէր ունեցած Թիֆլիսի մէջ, երբ Խնուսի, Մուշի, Մալազկերտի, Վանի եւ Երզնկայի մէջ Տաճկահայ գինական ուժերը կանոնաւոր գունդերու կերպարանք կը ստանային, կը դառնային իրական եւ իրաւական տէրը հայկական նահանգներու։ Անոնք Տաճկահայ զօրքի առաջին եւ իրական կորիզներն էին։ Իսկ Կովկասի եւ Ռուսաստանի մէջ ցրուած Տաճկահայութիւնը նոր կ'ենթարկուէր ընդհանուր եւ պարտադիր զօրահաւաքի մը, երթալ խտացնել ճակատի վրայ գործող զօրամասերը եւ իր զէնքի ուժով տէր դառնալու այն երկրին, որ իր հայրենիքը պիտի դառնար։

Այս բոլոր աշխատանքները կը կատարուէին հեւ ի հեւ եւ հապճեպ։ Տաճկահայութիւնը խանդավառութեամբ դիմաւորեց պարտադիր զօրակոչը։ Ամէն կողմէն խումբեր, վաշտեր, գումարտակներ, խառնիխուռն հաւաքուեցան Թիֆլիս, Ալէքսանդրապոլ, Երեւան եւ Կարս։ Իսկ երկրի սահմաններու մէջ հաւաքուած գինուորացուները իրենց մօտիկ շրջանի կազմակերպուած զօրամասերուն միացան։

Հոս յայտ եկաւ հայրենակցական թերութիւն մը, որ մեծապէս արգելք կը հանդիսանար շուտափոյթ եւ նպատակայարմար գինուորական դասաւորութեան։ Վանեցիները կը փափաքէին մեկնիլ Վան. Տարօնի պատկանողներ որ եւ է գնով կ'ուզէին հասնիլ Խնուս–Մուշ, մէկ ուրիշը կը փափաքէր մեռնիլ Կարինի պարիսպներուն տակը։ Այս խաչածեւող բաղձանքներուն ընդառաջ երթալու համար, ստիպուած էինք շատ ան–

ՏՄԾԿԱՀԱՅ... Ծար. էջ 9

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ



ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ԻՍԿԱԿԱՆ ԳԱՆՃԸ

ԴԱՍԵՐ՝ ՃՇՄԱՐԻՏ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԲԱԲԳԷՆ ԱՐԵՎԴԻՍԿՈՂՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի

Ո՞ր է իսկական գանձը, և ո՞ր պետք է զայն փնտռել: Աւետարանը յստակ կերպով այս հարցին կը պատասխանէ. «Ուր որ ձեր գանձերն են, այնտեղ են նաեւ ձեր սրտերը» (Մտ 6.21):

Այս աշխարհի գանձերը դիզելու մոլուցք չունենա՛նք երբեք: Գանձը միայն դրամը չէ, այլ՝ ամէն տեսակի սեփականութիւն: Բնականօրէն, սխալ չէ սեփականը ունենալ: Աստուած երբեք չ'արգիլեր, ընդհակառակը՝ առիթը կ'ընձեռէ ունենալու այն, ինչ որ մեր կարիքները գոհացնելու համար է: Երբեք գանձեր չդիզենք այս աշխարհին մէջ, այսինքն նիւթին գերին չդառնանք, և նիւթը թող չդեկավարէ մեզ: Այս երկրաւոր կեանքի գանձը կը փճանայ, որովհետեւ ժամանակն է, այլ՝ զնայուն:

Այսպէս, բոյսերն ու ծաղիկները կը թառամին եւ կը չորնան, երկրաշարժներ ու փոթորիկներ կու գան, կը խլեն ամէն ինչ: Մարդը կը ծերանայ եւ մահը կը հասնի ու կը գողնայ անոր կեանքը:

"Գանձեր դիզենք երկնքի մէջ". կը պատգամէ Յիսուս Քրիստոս. ան կ'ուզէ ըսել, որ իւրաքանչիւր կատարուած բարի գործ այս աշխարհի մէջ երկնքի գանձ է եւ հաւատքի դրսեւորում:

Օր մը հարուստ երիտասարդ մը մզտեցաւ Քրիստոսին եւ հարց տուաւ. «Բարի Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ» (Մր 10.18): Երիտասարդը գանձեր կը փնտռէր երկնքի մէջ: Յիսուս Քրիստոս յստակ կերպով պատասխանեց անոր. "Գնա, վաճառէ ունեցած հարստութիւնդ, աղքատներուն տուր եւ գանձեր կ'ունենաս երկնքի մէջ" (Մր 10.21): Դժբախտաբար, երիտասարդը չլսեց Յիսուս Քրիստոսի խորհուրդը եւ չհրաժարեցաւ երկրի վրայ իր ունեցած գանձերէն, որովհետեւ կը սիրէր եւ անոնց գերին դարձած էր:

Իւրաքանչիւր հաւատացեալ վստահ պէտք է ըլլայ, որ ինք Աստուծոյ հաւատարիմ ծառան է եւ այն ինչ որ ունի կը պատկանի Աստուծոյ: Իսկական գանձը մեր գործն է, իրական գանձը՝ մեր սիրտն ու հոգին, այնտեղ է, ուր մեր Տէրն է: Յիսուս Քրիստոս կը հարցնէ՝ ի՞նչ կայ քու սրտիդ մէջ, ի՞նչ նպատակ ունիս, ո՞վ է տէրդ, եւ որո՞ւն կը ծառայես:

Հեռու ժամանք այս աշխարհի գանձերէն: Մեր հայեացքը դարձնենք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մեր Աստուծոյ, այն ժամանակ կրնանք երկնքի մէջ գանձեր դիզել:

Մեր Տէրը կ'ըսէ. «Ով որ կ'ուզէ ինծի ծառայել, պէտք է հետեւի ինծի, եւ ուր ես կ'երթամ այնտեղ կ'ըլլայ նաեւ ինծի ծառայողը» (Յհ 12.26): Ոչ որ չի կրկար երկու Տիրոջ ծառայել, պիտի ծառայէ կա մ մամոնային կա մ Աստուծոյ:

Այսօր հարց տանք մենք մեզի՝ որո՞ւն կ'ուզենք ծառայել: Մամոնային ծառայողը կը ղեկավարուի սատանային կողմէ եւ միանգամընդմիջտ կը հեռանայ Աստուծմէ: Սակայն ան որ Աստուծոյ կը ծառայէ, Աստուծմէ կը ղեկավարուի եւ յաւիտենական ուրախութեան ժառանգորդ կը դառնայ: Երկու ճանապարհ կայ. մէկը նեղ ճանապարհն է, որ կ'առաջնորդէ դէպի յաւիտենական կեանք, եւ միւսը՝ լայն ճանապարհը, որ կ'առաջնորդէ դէպի յաւիտենական կորուստ:

Ընտրութիւնը մերն է... Ո՞ր ճանապարհը կ'ընտրենք. յաւիտենական մահուա ն, թէ՛ յաւիտենական կեանքի...:

Վստահ եղէք, ուր որ ձեր սրտերն են, այնտեղ է նաեւ ձեր իսկական գանձը:



Մեծերը պէտք չէ հպարտանան փոքրերուն վրայ, եւ ո՛չ ալ փոքրերը նախանձին մեծերուն, այլ պէտք է սիրով իրարու միանան: Ինչպէս գլուխը, որ մարմնի վերի մասը կը գտնուի եւ կարիք ունի ուղբերուն, որոնք վարը կը գտնուին, այսպէս ալ մեծերը կարիք ունին փոքրերուն, որովհետեւ առանց հպատակի նոյնիսկ իշխան կարելի չէ ըլլալ:

Աղքատութիւնը խաղաղ նաւահանգիստ մըն է եւ նման է հրեշտակներուն: Հարիւր մարդ եւ նոյնիսկ թագաւորը չեն կրնար կողոպտել աղքատն ու մերկը, մինչ արծաթասէրը բոլորին կողմէ նեղութիւն կը կրէ: Երբ շատ բան հաւաքես՝ աւելի ն կը ցանկաս: Իսկ շատին ցանկալը աղքատութեան նշան է, ինչպիսին է հարուստը. Հետեւաբար, ան քեզմէ աւելի աղքատ է:

Հիմա ըսէ, արդեօք համաձայն կը գտնուէի՞ր, եթէ մէկը իր տունը զարդարէր եւ քեզ մերկ նստեցնէր ներսը. անա դո՛ւն եւս մարմինդ տան նման կը զարդարես, իսկ հոգիդ կը ձգես, որ մերկ եւ անօթի նստի ներսը:

Արծաթսիրտութիւնը միայն շատի ցանկութիւնը չէ, այլ բոլորովին ինչքերու ցանկութիւնը՝ երբ անհրաժեշտէն աւելին կ'ուզենք ունենալ: Միթէ ոսկիին եւ թանկարժէք քարերու քանակն էր, որ մատնիչը հրապուրեց, ո՛չ եղածը երեսուն արծաթ էր:

Բարսեղ Մաշկեւորդի

ՀՈԳԵԻՈՐ

ԳԹԱԼԸ ՍԻՐՈՅ ԲԱՆԱԼԻՆ Է

«Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, գթաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց»: (Մտ 14.13):

Բոլորիս շատ ծանօթ հրաշայի դրուագ մըն է հինգ հազարին կերակրումը (Մտ 14.13-21): Երկու գլխաւոր մտածութիւնք առանձնացնենք և մտածենք անոնց մասին: Առաջինը, հետեւեալն է. «Յիսուս... գթաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց»: Գթալ բառը չհամեմատենք խղճահարութեան կամ խղճալուն հետ. անոր մէջ կայ մարդկային ազնուագոյն հոգիի արտայայտութիւնը. Խղճահարութիւնը եթէ իր մէջ ունի որոշ չափով կրաւորական մօտեցում, ապա գթալը մարդոց կարիքներուն հասնելու մարդկային մղումն է, ձեռք երկարելը և ուրիշին օգնութեան հասնիլը: Նման պահուան մէջ էր, որ անգամ մը Յիսուս յայտնուեցաւ, երբ հանդիպեցաւ իրեն հետևող յոգնած անօթի բազմութեան մը, և իր աշակերտները մղեց, որ այդ բարի մարդիկը կերակրեն, ուտելիք հայթայթեն. Յիսուսի հրաւերին դիմաց անոնք անել վիճակի վատնուեցան, չգիտցան ի՞նչ ընել, և ահաւասիկ ինչպէ՛ս գործի վերածուեցաւ Յիսուսի գութը, առաւ հինգ հազը եւ երկու ձուկը, աչքերը երկինք բարձրացուց, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաժնեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան: Երբ ցանկութեան և գութի հետ միանայ նախաձեռնութիւնը այնպայման հրաշք տեղի կ'ունենայ: Այդպէս նաև մեր կեանքը լեցուն է՝ նման պահերով. Ինչքա՛ն մարդիկ կան կարօտ բանի մը... յաճախ այդ մարդոց մօտէն կ'անցնինք, խղճալով միայն, առանց մտածելու թէ ի՞նչ կրնանք ընել: Յիսուսի նախաձեռնութիւնը բոլորինս պէտք է ըլլայ. Այո՛, կրնանք բան մը ընել անպայման, եթէ ուզենք անշուշտ: Դժուար է երբեմն հասնիլ բոլորին, մանաւանդ երբ հարց առաջանայ մեր մէջ, թէ ինչպէ՛ս. պատասխանը պարզ է, միայն սիրով. Եթէ մեր մէջ գոյութիւն ունի այս առաքինութիւնը, ո՛չ «ինչու»ն ո՛չ ալ «ինչպէս»ը կրնան ծագիլ, այլ միայն կը լծուինք և կը գտնենք լուծութիւն: Մեր ընկերութիւնը այսօր կարիքը ունի այս առաքինութեան, սիրոյ զգացումին, որպէսզի ան դառնայ աւելի առողջ, աւելի բարի, չճնալու անօթի կամ ծարաւ:



ԹԻՄԱՒՈՐԻՉ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ




Ադամական մեղքէն յետոյ, մարդոցմէ քիչերն էին, որ կ'ապրէին աստուածաշնորհեամբ: Անոնց մեծ մասը մոլորուեցաւ, հեռացաւ Աստուծմէ եւ սկսաւ կուռքեր պաշտել:

Մակայն մարդուն տրուած է առ Աստուած դառնալու հնարաւորութիւն, ի տարբերութիւն Մատանային, որուն վարդապետները անդարձ օձ կը կոչուին:

Մոլորութենէն դէպի Աստուած ետ դառնալը կը կոչուի դարձ: Անիկա կը կատարուի զոջումով եւ նախկին աստուածամերժ կեանքէն հրաժարելով, ճշմարիտ հաւատքի խոստովանութեամբ, մկրտութեամբ եւ նոր, պատուիրանապահ կեանքով ապրելու խոստումով:

Դարձը իւրաքանչիւր մարդու եւ ժողովուրդի կեանքի մեծագոյն իրադարձութիւնն է:

Մակայն դարձէն ետք ալ, մարդուն փրկութիւնը կրնայ վտանգուիլ մեղքերու պատճառով: Այդ ժամանակ անհրաժեշտ է կրկին դառնալ Տիրոջը, ապաշխարութեամբ, մաքրուելու մեղքերէն, եւ Սուրբ Հաղորդութեամբ վերստին միաւորուելու Անոր հետ: Ոչստի պէտք է մշտապէս քննել սեփական անձը եւ պարզել արդեօք անիկա կրկին ետ չէ՞ դարձած Աստուծմէ դէպի զանազան մեղքեր ու մոլորութիւններ: Եւ երբ այդպիսի շեղումներ նկատենք, պէտք է վերստին դառնանք դէպի Իրեն եւ աղօթենք, ինչպէս սուրբ Եփրեմ Ասորին կ'ըսէ. «Անոխակա լ Տէր, մի անտեսեր զիս իմ բազում չարիքներուս պատճառով, այլ նայի ր ինձի, բոլոր ցանկութիւններս Քեզի դարձուր եւ ինձի ողջ սրտով տրվեցուր միայն Քեզ սիրել»:



ՆԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԽԻՋԱԽ ՇՐՋԱՆԱԻԱՐՏԸ

Յուլիս է, արդէն իսկ տարին կէս եղաւ, իսկ դպրոցականներու համար վերջ գտաւ...:

Յուլիսը աշակերտներուն եւ ուսուցիչներուն սպասած ամիսն է, ուր 10 ամսուան դպրոցական տարեշրջանը կ'աւարտի եւ ամառնային արձակուրդը կը սկսի:

Այսամիս Գանատայի մէջ հազարաւոր շրջանաւարտներ պիտի տողանցեն բեմերու վրայ, ստանալու համար իրենց 12 տարուան աշխատանքին արդիւնքը եղող վկայականը: Հանգրուան մը, որուն կը սպասէին ու հասան...:

Իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է, կը գրէ Սողոմոն իմաստուն:

Ան որ Տիրոջ վախը ունի իր սրտին մէջ, իմաստուն է, եւ լոյսի մէջ քալելով օրինակելի կը դառնայ:

Պատանի մը կար Մեւակ անունով, որ ասկէ տարիներ առաջ Յուլիս ամսուան մէջ մեծ խանդավառութեամբ կը սպասէր իր հանդէսը:

Ան խելացի եւ հաստատամիտ անձ էր, իր դասարանին լաւագոյն աշակերտներէն մէկը, որ միշտ եղած է պատուոյ ցանկին վրայ եւ ունեցած բարձրագոյն միջինը: Ճանչցուած էր որպէս բարի, իմաստուն աշակերտ, եւ բոլոր ընկերները գիտէին, որ ինք բարոյական եւ կրօնական հաստատ համոզումներ ունէր: Շատ սիրուած ու յարգուած էր բոլորին կողմէ: Ան միաժամանակ եկեղեցւոյ սարկաւագներէն մէկն էր:

Հանդէսէն շաբաթ մը առաջ, Մեւակը իր գրած ուղերձը կարդացած էր տնօրէնին առջեւ:

Մակայն հանդէսէն քանի մը օր առաջ, դպրոցի խորհրդատու ուսուցիչներէն մին կը հեռաձայնէ Մեւակին եւ կ'առաջարկէ որ փոխէ իր ուղերձին բանաձեւը: Հաստատամիտ շրջանաւարտը անդրդուելի կը մնայ, քանի որ գրած էր այն, ինչ որ իր անկեղծ սրտէն կը բխէր:

Հանդէսին օրը, ուսուցչուհից մէկդի կը կանչէ զինք եւ կը հարցնէ, թէ արդեօք հետեւա ծ էր իր ցուցմունքներուն. Ոչ կը պատասխանէ Մեւակը. «Ես խորհեցայ եւ աղօթեցի այդ մասին, ես չեմ ուզեր բառ մ'իսկ փոխել»: Ուսուցիչը կը բարկանայ. սակայն Մեւակը վճռականութեամբ կ'ըսէ. «Կը նախընտրեմ բնաւ չկարդալ ուղերձս, քան թէ փոխել անոր պարունակութիւնը»:

«Ուրեմն այդպէս թող ըլլայ». կ'ըսէ ուսուցիչը եւ արագ քայլերով կը հեռանայ:

Մեւակը կը շշմի, կ'անդրադառնայ եղելութեան, եւ կը սկսի հեծկլտալ... Մեծ ցաւ ու կը զգայ և անյարմար վիճակի մէջ կը գտնուի: Ան ջանացած էր դպրոցին բարձրագոյն միջինը պահել, որպէսզի Ստեղծիչին եւ ընտանիքին պատիւ բերող շրջանաւարտ մը ըլլար, սակայն այդպէս ըլլալով հանդերձ, առիթը պիտի չունենար իր սրտաբուխ ուղերձը կարդալ այդ գիշեր:

Վերոյիշեալ հանդէսին իւրաքանչիւր շրաջանաւարտ իր բաժինը բերաւ, բացի Մեւակէն, վկայականները բաշխուեցան եւ ամէն բան վերջացաւ:

Նոյն գիշերը, Մեւակը քանի մը ընկերներով եկեղեցւոյ երիտասարդներ խումբով ձաշարան գնաց: Թէեւ ուրախ էր, բայց ներքնապէս շատ ընկճուած:

Երբ երիտասարդացի առաջնորդը խօսք առաւ ճաշէն յետոյ, առաջարկեց Մեւակին որ կարդար այն ուղերձը որ արգիլուեցաւ հանդէսին: Ներկաները ապշեցան, որովհետեւ չէին իմացած եղելութիւնը:

Մեւակը սկիզբը տատամսեցաւ, բայց չմերժելով իր բարեկամները, սկսաւ կարդալ ինքնավստահութեամբ:

«Նախ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել իմ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, որ զիս այս դիրքին արժանացուց այս գիշեր:

Նաեւ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ծնողքիս, որոնք տարիներու ընթացքին նեցուկ եղան ինձի եւ օգնեցին որ ըլլամ այն անձը որ այսօր եմ: Հաւանաբար մեծամասնութիւնդ կ'անկնկալէք, որ ձեզի ըսեմ պէտք է համալսարան երթաք ու ձեր ուսումը շարունակէք, քանի որ ատիկա շատ կարեւոր է: Բայց ես այդպէս պիտի չ'ըսեմ, դուք այս խօսքերը միշտ կը լսէք: Ինձի համար ձեր կեանքին մէջ ամենակարեւորը լաւ ուսում կամ լաւ գործ ունենալը չէ, այլ գիտնալ, թէ Տէրը ունիք ձեր սրտերուն մէջ. կարեւոր չէ, որ քանի տարի դպրոց կ'երթաք եւ որքան յաջողակ անձեր կ'ըլլաք. եթէ Աստուծոյ կամքը չ'էր կատարէր, այս բոլորը անօգուտ եւ: Աստուած մէկ բանի կը նայի մեր մէջ, թէ որքանո՞վ մեր Յիսուս Քրիստոսը ունինք մեր սրտերուն մէջ:

«Քրիստոս աշխարհ եկաւ, ինքզինք խոնարհեցուց, ծաղրուեցաւ, չարչարուեցաւ, խաչուեցաւ ու թաղուեցաւ, եւ իր անգին արիւնը թափեց միայն մեզի համար, միայն ձեր սիրոյն, որ դուք կարենաք երկինք փոխադրուիլ Իրեն հետ»:

Ահա այս էր Մեւակին ուղերձը, այս խիզախ շրջանաւարտին սրտի խօսքը, որ արգիլուեցաւ իր հանդէսին օրը կարդալու բեմէն: Մակայն իր իօրաքրոջ դրդումով Մեւակին հարցը ներկայացուեցաւ յատուկ դատական ատեան, եւ իրաւաբաններուն որոշումով այս արարքը անընդունելի նկատուեցաւ, եւ տարի մը յետոյ դարձեալ նոյն սրահին բեմը բարձրացաւ եւ ան նոյն ուղերձը կարդաց:

Միւրելիներ,

Այսօր եթէ նայինք նոր սերունդին, անոնց մտածելակերպը, երագները, փափաքները եւ նպատակակէտերը տարբեր են: Անոնք կը թուին ըլլալ հաճոյասէր, անհոգ եւ աննպատակ սերունդ մը: Մորվեցնենք մեր զաւակներուն իսկական կեանքի նպատակը, որպէսզի ունենան այս Մեւակին պէս խիզախ կեցուածք, Քրիստոնէական համոզումներուն վրայ հիմնուած, բարձր և լուսաւոր պահելու Լուսաւորիչի կանթեղը:

Հրահաս

ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ

Վստահ ենք, թէ շատեր լսած են «Կիպրիանոս» աղօթագիրքին մասին, եւ օգտուած են անոր աղօթքներէն, որոնց մասին մեր մեծերը արտայայտուած են որպէս զօրաւոր աղօթքներ:

Ազնուական եւ մեծահարուստ ընտանիքի մը զաւակը՝ Կիպրիանոս, ապրած է 3-րդ դարուն. ան յոյն էր, եւ հեթանոս ընտանիքի մը զաւակը:

Իր ինքնակենսագրութեան մէջ եւ քրիստոնէութեան դարձի պատմութեան մէջ, Կիպրիանոս կը պատմէ, թէ ինչպէս իր ծնողքը զինք փոքր տարիքէն յանձնած էին կուռքերու ծառայութեան եւ կախարդութեան ուսման: Ան կ'ըսէ. «Շատ անգամ օդը կը բարձրանայի, կախարդութեամբ ծովուն վրայէն կը քալէի... մոլորած էի չար գործերու մէջ... ոմանց աչքացաւ կը պատճառէի, ոմանց գլխացաւ... այր եւ կին իրարմէ կը բաժնէի...եւ ասոնց շարքին բազմաթիւ չարութիւններ»:

Նոյն քաղաքին մէջ կ'ապրէր Յուստիան անունով քրիստոնէայ իշխանուհի մը, որ զանազան առիթներով մերժած էր կռապաշտ իշխանի մը ամուսնութեան առաջարկը: Իշխանը կը դիմէ Կիպրիանոսին, որ իր միջոցներով փորձէ կախարդել զայն: Կիպրանոս քանիցս կը ձախողի:

Կիպրանոսի ձախողութիւնը անդրադառնալ կու տայ իրեն, թէ գոյութիւն ունի անելի զօրաւոր ուժ մը, քան իր կախարդական-դիւական ոյժը, զոր յաղթահարելը անկարելի է: Կը հետաքրքրուի եւ կ'իմանայ Յիսուս Քրիստոսի մասին, ու կը յայտարարէ. «Ես կը հաւատամ Քրիստոս Աստուծոյ եւ անոր խաչի զօրութեան»: Քառասուն վեց տարեկանին կը մկրտուի, քահանայութեան կը նուիրուի, եւ կարճ ժամանակ ետք եպիսկոպոս կը ձեռնադրուի: 258 թուականին, քրիստոնէութեան դէմ հալածանքներու ընթացքին կը ձերբակալուի եւ կը գլխատուի: Կը նահատակուի նաեւ Յուստիան իշխանուհին իր 45 ընկերուհիներով միասին, որոնք կը նախընտրեն նահատակուիլ քան կուռքերուն զոհ մատուցանել:

Գարեգին Վրդ. Շխրտմեան

Հոգեւոր Հովիւ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ



MESSAGE DU PRÉLAT

Le véritable trésor

Où faut-il chercher pour pouvoir dénicher le véritable trésor? La Bible répond à cette question de manière très claire: «Là où est ton trésor, là aussi sera ton cœur.» (Matthieu 6:21)

Ne devenons pas amasser des trésors sur la terre. Il est question non seulement de l'argent comme unique richesse, mais également de tous les objets matériels, qui ne sont pas permanents. Posséder des choses n'est pas mal en soi. Dieu ne l'a jamais interdit. Au contraire, il est nécessaire d'avoir accès à ce dont nous avons besoin. Ne pas amasser les trésors de ce monde signifie ne pas devenir les esclaves du matériel et laisser celui-ci régner sur nous. Les trésors du monde terrestre sont vite détruits, car ils ne sont pas durables, mais éphémères, périssables.

Ainsi, les plantes s'assèchent, les fleurs se fanent, les tempêtes et les tremblements de terre sévissent, détruisant tout sur leur chemin. L'homme vieillit, puis la mort lui rend visite afin de lui prendre sa vie. «Amassez-vous des trésors dans le ciel», dit Jésus Christ. Chaque bon geste accompli sur terre est une expression de la foi et reçu comme un trésor dans le ciel.

Un jour, un homme en possession de grands biens s'est approché du Christ pour lui demander: «Bon maître, que dois-je faire pour hériter la vie éternelle?» (Marc 10:17) L'homme voulait amasser des trésors dans le ciel. Jésus Christ lui a répondu: «Va, vends tout ce que tu as, donne-le aux pauvres, et tu auras un trésor dans le ciel.» (Marc 10:21) Malheureusement, l'homme n'a pas écouté le conseil du Christ et n'a pas voulu renoncer aux richesses qu'il possédait sur terre, car il les aimait tant qu'il en était devenu esclave.

Chaque fidèle doit croire qu'il est le serviteur de Dieu et que tout ce qu'il possède Lui appartient. Le vrai trésor est notre travail, notre cœur, notre esprit, car c'est là où se trouve Dieu. Jésus Christ nous demande ce qui est dans notre cœur, quels sont nos objectifs, et qui est notre seigneur. Gardons nos distances avec les trésors de cette terre. Regardons plutôt notre maître Jésus Christ, notre Dieu, car ce n'est qu'alors que nous pouvons amasser des trésors dans le ciel.

Notre Seigneur dit: «Si quelqu'un me sert, qu'il me suive; et là où je suis, là aussi sera mon serviteur.» (Jean 12:26) Personne ne peut servir deux seigneurs: il faut choisir entre Mammon et Dieu. Demandons-nous: qui aimerons-nous servir? Le serviteur de Mammon est contrôlé par Satan et s'est éloigné de Dieu, alors que celui qui suit et sert Dieu devient l'héritier du bonheur divin. Il y a deux chemins qui s'offrent à nous: l'un est plus étroit, mais nous amène à Dieu et à la vie éternelle, alors que l'autre est plus large, facile d'accès, et nous mène à notre perte.

Le choix est le nôtre... Quel chemin choisir? La mort éternelle, ou la vie divine? Soyez certains d'une seule chose: là où est votre cœur, là aussi sera votre trésor.

WESTERN ONES, WESTERN CHURCHES

The True Treasure

Where must one search in order to find the true treasures of this world? The Bible answers this question simply and clearly: "For where your treasure is, there your heart will be also." (Matthew 6:21)

We must not try to gather and accumulate the treasure on earth – not only money, but also all material objects, which will not last forever. Owning objects is not wrong in and of itself. God never forbade it. Quite the opposite, it is important to have whatever is necessary for one's needs. But not gathering the treasures on earth is important so that we do not become enslaved to material objects. The treasures on earth are quick to decay, for they are not permanent and long-lasting, but fleeting and ephemeral.

Thus, plants dry up, flowers wilt and wither, storms and earthquakes shake the earth and destroy everything in their way. Man grows old until, one day, death comes to take his life away.

"Store up for yourselves treasures in heaven," said Jesus Christ. Every good action carried out on earth is an expression of faith and translates into a treasure in heaven.

One day, a man, who had great possessions, ran up to Jesus and asked, "What must I do to inherit eternal life?" (Mark 10:17) The man wanted to gather treasures in heaven. Jesus said to him, "Go thy way, sell whatsoever thou hast, and give to the poor, and thou shalt have treasure in heaven." (Mark 10:21)

However, the man did not embrace Christ's advice, as he did not wish to renounce his possessions on earth, for he so loved them that he had become their slave. Every believer must trust that he is God's faithful servant and that all he possesses belongs to Him.

The true treasures are our work, our heart, our spirit, for this is where God resides. Jesus Christ asks us what is in our heart, what is our aim in this life, and who is our real lord.

We need to stay as far away as possible from the treasures on earth. Let us take heed instead of Jesus Christ, our Lord, because it is only then that we may gather and store treasures in heaven.

The Lord said, "If any man serve me, let him follow me; and where I am, there shall also my servant be." (John 12:26) No one can have two masters: one must choose between Mammon and God. Let us then ask ourselves: who do we wish to serve? Mammon's servant is controlled by Satan and has stayed from the Lord, whereas he who follows and serves God inherits the happiness of heaven. There are two paths offered to us. One is much narrower, yet takes us directly to God and to eternal life. The other, although wider, leads us to eternal damnation.

The choice is ours...Which path do we choose? Eternal life, or eternal death?

Be assured of one thing: where your heart is, there your treasure will be also.

FREEDOM "Freedom..." was the last word William Wallace (actor: Mel Gibson) shouted out loud before being executed under torture in the movie "Braveheart". What is freedom, and why do people sacrifice their lives for it?

Freedom is the existential "breath" of an individual or a society. It is impossible to live without, and it is worth dying for. It is the medium by which individuals and nations can realize themselves and become whoever and whatever they want to be. Therefore, freedom is not an aim in itself; it is the means to achieve life's goals, and the ultimate purpose of becoming who you are created to be.

Yet, freedom has often been abused or misused to the degree of self-destruction. On a personal level, having the freedom to smoke and drink often ends up very tragically. On a political or national level, power abuse has been implemented by governments, either upon other nations or on their own people. Hence, with freedom comes responsibility, which assumes moral, ethical standards, and boundaries. No one is absolutely free to do whatever, whenever, and wherever he/she wants to do; one may, but one cannot control the negative consequences one's actions would produce. As it is said: "Sometimes freedom is the enemy of freedom."

Use it wisely, don't abuse/misuse it self-destructively.

In the first book of the Bible, Genesis (Chapters 1-3), in the creation narrative, God created human beings, man and woman, and gifted them with a free will, and gave them a choice. They had to choose either to obey God's wisdom or eat of the fruit of the forbidden tree of the knowledge of good and evil (which linguistically, in original Hebrew language terms, means falling into the arrogance of omniscience; in other words, playing God). The big question is: why did God set this "trap" before the first humans he had just created? It is because God wanted His creatures to love him freely. Now, how can anyone love genuinely without having the freedom not to love? By Biblical definition, love cannot be and should not be forced, it has to be genuinely free and unconditional. Hence, the free will...

to be continued

ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ

ՄԻ՝ ՄՈՌՆԱՐ



Տունը որեւէ կենդանի կը պահէ՞ս:

Անին նապաստակներ ունէր, որոնք կը սիրէր: Օր մը անոնք իրենց տնակէն դուրս ելան: Անին վազվզեց չորս կողմը եւ բոլորը բռնեց, բացի մէկէն: Նեղուեցաւ ասոր համար. յետոյ յիշեց թէ կրնայ աղօթել:

Անին մացառներուն քով ծունկի եկաւ, եւ Աստուծմէ խնդրեց որ իրեն օգնէ: Երբ աչքերը բացաւ, ի նչ կը խորհիք որ տեսաւ... Նապաստակը որ դէպի իրեն կը վազէր: Չայն բռնեց եւ բոյնը դրաւ: Այնքան ուրախացաւ, որ կրկին ծունկի եկաւ եւ Աստուծոյ շնորհակալութիւն յայտնեց:

Իսկ դուք Աստուծոյ կ'աղօթէ՞ք, պատասխան կ'առնէ՞ք: Մի մոռնաք շնորհակալ ըլլալ, երբ պատասխան ստանաք: Աւելի լաւ է շնորհակալ ըլլալ պատասխան ստանալէ առաջ իսկ: Այդ ցոյց կու տայ, թէ դուն կը հաւատաս Աստուծոյ խոստմնապահ ըլլալուն:

Word Search

ATTRIBUTES	GRATEFULNESS	PRAISE
CREATOR	HOLY	PRAYER
FAITHFULNESS	IMMUTABLE	RIGHTEOUS
GOD	JUST	SAVIOR
GOOD	LOVE	SHEPHERD

P	J	U	S	P	F	D	H	E	P	E	F	A	I
I	R	U	P	R	A	I	S	E	H	E	R	D	T
G	A	C	S	O	I	M	M	U	T	A	B	L	E
H	Y	R	A	T	T	R	I	B	U	T	E	S	R
T	E	E	R	G	H	O	S	A	V	I	O	H	I
G	R	A	T	E	F	U	L	N	E	S	S	E	G
L	G	T	S	F	U	Y	O	O	D	M	A	P	H
O	V	O	E	N	L	M	V	D	G	M	V	H	T
H	E	R	D	S	N	M	E	F	U	O	I	E	E
A	O	C	S	H	E	P	H	E	R	D	O	K	O
T	R	L	R	E	S	F	U	L	N	E	R	D	U
T	O	R	Y	A	S	P	R	A	Y	E	R	L	S

Գանատայի Հայոց Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներու նպատակն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դասանութեան եւ աւանդութեան համաձայն՝ մեր մանուկներուն եւ պատանիներուն ջամբել կրօնական դաստիարակութիւն եւ եկեղեցւոյ վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:



Ձեր զաւակները Կիրակնօրեայ Դպրոց արձանագրելու համար, կրնաք հեռաձայնել ձեր շրջանի եկեղեցիներու գրասենեակները:

Կիրակնօրեայ Դպրոցի ժամերն են՝ Կիրակի առաւօտները ժամը 10:30-1:00:



ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ



Առաքելները, երբեկեղեցական խորհուրդ մը կը կատարէին, տարբեր զգեստներ կը հագուէին՝ հաւատացեալներէն զանազանուելու համար: Այդ սովորութիւնը մինչեւ այսօր ալ բոլոր հոգեւորականները կը կիրարկեն:

Շապիկ. մինչեւ ոտքերը երկարող զգեստ է, որ դպիրներուն եւ սարկաւագներուն եկեղեցիէն ներս գործածելու յատուկ տարագն է: Կայ նաեւ պատարագիչի յատուկ ճերմակ շապիկ, որ կը խորհրդանշէ մաքրութիւն, պարկեշտութիւն:

Ուրար. նեղ եւ երկար կտոււէ կտոր մըն է, որ կը ձգուի սարկաւագի շապիկին վրայէն:

Փորուրար. քահանային յատուկ ուրարն է. աւելի լայն, վիզէն կտրծքին վրայ կախուող: Կը նշանակէ Քրիստոսի լուծը, որ քահանան իր վրայ կ'առնէ: Կը խորհրդանշէ արդարութիւն եւ բարեպաշտութիւն:

Գօտի. մէջքի կապ է՝ փորուրարը ամրացնելու եւ դէնջակը՝ անձեռոցը կախելու: Կը խորհրդանշէ հաւատք, որ ոյժ կու տայ հոգիին եւ նշան է հոգեւոր իշխանութեան:

Ղենջակ. պատարագիչը գօտիին վրայ կը կրէ զայն, իբր օրինակ Քրիստոսի այն դէնջակին, որով աշակերտներուն ոտքերը սրբեց:

Բազպան. պատարագիչի նախաբազուկներուն վրայ կապուող կամ կոճկուող թելնոցներն են: Նշան է Յիսուսի ձեռքի կապանքներուն, նաեւ բազկի զօրութեան՝ Տիրոջ ծառայելու:

ՃԻՇՏՈՒ ԳԻՏՆԱՆՔ

Ի՞նչ է Սկիհը եւ ի՞նչու կը բարձրացուի

Սկիհը եկեղեցւոյ սրբազան անօթ-ներէն մէկն է, որ կը գործածուի Ս. Պատարագի ընթացքին, եւ մէջը խորհ-րդակատարութեան զինին ու նշխարը կը դրուի: Պատուանդանով բաժակ մըն է. արտաքին մասը զարդարանքներ ունի, իսկ բաժակին վերի մասը, այնտեղ, ուր գինին պիտի լեցուի եւ յետոյ նշխարը պիտի թաթխուի, անպայման արծաթէ կամ ոսկեգօծուած պէտք է ըլլայ: Սկիհը կրնայ նաեւ ամբողջութեամբ ոսկիէ պատրաստուիլ եւ զարդարուած ըլլալ թանկագին քարերով: Ժամանակին «սկիհ»-ը, որպէս բառ, գործածուած է նաեւ «սկահ» ձեւով որ կը նշանակէ թաս, բաժակ:



Սկիհը կրնայ պղինձէ, արծաթէ կամ ոսկիէ պատրաստուիլ, իսկ պատուանդանը տարբեր մետաղէ: Եթէ պատահի, որ պղինձէ պատրաստուած է, բաժակի մասը անպայման արծաթէ պէտք է ըլլայ, որ ինքնին առողջապահական իմաստ եւս ունի:

Սկիհը, ինչպէս նշեցինք, կը գործածուի Ս. Պատարագի ժամանակ: Հացն ու գինին սրբագործութեան ընթացքին խորհրդանշական կերպով Քրիստոսի մարմնին ու արեան կը փոխակերպուին եւ հաւատացեալներուն որպէս հաղորդութիւն կը բաշխուի:

Քրիստոս, Վերջին ընթրիքի ընթացքին, աշակերտ-ներու ներկայութեամբ, օրհնեց հացը, բեկանեց եւ բաժնեց ըսելով, որ անիկա էր մարմինն է, այնուհետեւ գինին օրհնեց եւ բաժնեց աշակերտներուն ըսելով, որ անիկա էր արիւնն է: Պատուիրեց նաեւ, որ իրենք եւս այս խորհուրդը կատարեն Իր յիշատակին համար: Այս ձեւով բաժակը կամ սկիհը ընդհանրացաւ քրիստոնէայ եկեղեցիներուն մէջ, այնտեղ պահելու հացն ու գինին:

Շար 1

ՅՈՒԼԻՍ ՏՕՆԵՐ

ՅՈՒԼԻՍ							2018
Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի	
						1	
2	3	4	5	6	7	8	
9	10	11	12	13	14	15	
16	17	18	19	20	21	22	
23	24	25	26	27	28	29	
30	31						

Յուլիս 1

Գանատայի Օր

Յուլիս 8

Վարդավառ՝ Պայծառակերպութիւն Քրիստոսի

Յուլիս 14

Ս. Թադէոս եւ Ս. Սանդուխտ



ՀՈԳԵԻՈՐ ԽՕՍՔ

«Գալով մեզի, չձանձրանանք բարիք գործելէ, որովհետեւ եթէ յարատեւենք՝ անպայման որ արդիւնքը պիտի քաղենք իր ատենին»: Բ Թետղ 3:13



A.C.C. TORONTO

SUMMERFEST 2018

JULY 13 | 14 | 15

Win a
2018
Mazda3!!!

FULLY PAID FOR
ONLY \$20 / TICKET



ARMENIAN RELIEF SOCIETY Summerfest Lottery Draw

ONLY 3,000 TICKETS ISSUED - \$20 a ticket

Draw Date: Sunday, July 15, 2018 at 9:00PM

Lottery License No. M809677
Prize Value: \$22,500 CAD



MAJOR
PLATINUM
FOOD
SPONSOR



#accsummerfest2018

PLATINUM
SPONSOR



ARMENIAN HERITAGE CRUISE® 2019

• Miami • Roatan • Costa Maya • Nassau • Cozumel

January 20-27, 2019

You must book
with TravelGroup in
order to attend our
private Armenian
parties!

Prices starting at:

INSIDE CABIN	\$1,034
CENTRAL PARK VIEW	\$1,134
OCEAN VIEW	\$1,234
CENTRAL PARK BALCONY	\$1,374
BOARDWALK BALCONY	\$1,359
OCEAN VIEW BALCONY	\$1,524
JUNIOR SUITES	\$2,319
GRAND SUITES	\$3,519

Rates are per person for double occupancy cabins:

Limited additional luxury suites available upon request. For pricing on triple and quad occupancy cabins, contact TravelGroup.

Prices include Cruise, Port Charges and all AHC private events. Government tax of \$137.45 per person is additional. Rates and Information subject to change at any time without notice.

For Reservations Contact:

Local 561-447-0750

Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102

125 SE Mizner Blvd., Suite 14

Boca Raton, FL 33432

AHC@travelgroupint.com

TRAVELGROUP
INTERNATIONAL



KEVORK ARTINIAN



HAROUT PAMBOUKJIAN
www.armenianheritagecruise.com



KHATCHIG JINGIRIAN



RoyalCaribbean
INTERNATIONAL

Call Arpi Bostajian-Ashkarian
(519) 748-2672
arpi@bostgroup.ca

CÉLÉBRATION OFFICIELLE



homenetmen@gmail.com



Հաճելի էր տեսնել, թե իրաքանչիւր
խումբ որքա՜ն մեծ ոգետրութեամբ կը փորձէր

Խաղերը շարունակուեցան երեկոյեան մինչեւ ժամը 6:00, որմէ ետք խումբերը գրուեցան

գրի, որախն եւ քարձր տրամադրութեամբ՝
իրականացուցած ըլլալով լանձնախումբին
հիմնական նպատակը:

60-ամեակի Յանձնախումբ



Հովանավորութեամբ՝ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Կազմակերպութեամբ՝ Ազգային Առաջնորդարանի

ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ

Վերապատուելի Տաթև Մանուէլ Ճինգաշեանի
"The Classical Armenian Bible: Its source and translation techniques"

Աշխատասիրութիւնը կը ներկայացնէ
Գերաշնորհ Տ. Անուշաւան Եպս. Դանիէլեան
Առաջնորդական Փոխանորդ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի

Հատորը յոյս տեսաւ մեկենասութեամբ՝
Տէր եւ Տիկին Ալպէր եւ Լէյլա Առոյեանի

Երկուշաբթի, 9 Յուլիս 2018
Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահ
Երեկոյեան ժամը 8-ին



Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

À partir de **995\$** (hors taxes)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

**Gicleurs automatiques
dans chaque appartement**

**Մենք հոս ուրախ ենք
Պրն. Իրեկեան**

Պատահաբար չե՛րիս հաճախում եմ:
Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

Հիանալի առիթ Գանատայի մէջ իրենց մասնագիտութիւնը կիրարկել
ուզող կամ աշխատանքի նոր առիթներ փնտռող անհատներու համար



VERDUN ADULT & CAREER CENTRE

Մատուցուած ուսումնական ծրագիրներ

Մասնագիտական ուսման վկայականներ (DEP)

Բնակարանային եւ առեւտրական
շէնքերու շինարարական նախագիծ
(ճարտարապետական գծագրութիւն)

Ջրամատակարարման եւ ջեռուցման
համակարգեր

Համակարգչային տարբաւորումներու
սպասարկութիւն եւ համացանցեր



Յաւելեալ մանրամասնութիւններու համար նայա՛րէ՛ք

WWW.LBPCE.CA/VACC | 514.798.0405

Ելեմտական օգնութիւն տրամադրուած է

Վկայականը վաճարուած է Կրթական
նախարարութեան կողմէ

6050 boulevard Champblain,
Verdun, QC
H4H 1A5
Tél: 514-798-0405

**Նոր ասպարեզ կրնաք մուտք գործել
16 ամիսէն**

STIM: Skills, Training or Innovation
Box 112



Lester B. Pearson
Verdun Adult and Career Centre



Concert Classique Բայանիկ Ռասսիսյան Համերգ

Organisé par
SOCIÉTÉ D'ASSISTANCE AUX ORPHELINS ARMÉNIENS (SOAR)
CHAPITRE DE MONTRÉAL

Կազմակերպութեամբ՝
Ծնողագործի Հայ Երեխաներու Օգնութեան Միութեան (Մոնթրէալի մասնաճիւղի)
Տանգանակոած գումարը պիտի յատկացուի Ծնողագործի Հայ Երեխաներու Օգնութեան Միութեան

Sous la présidence de
M. ET MME HABIB & FULDA MALO
Նախագահութեամբ՝
Տէր եւ Տիկին Հապիպ եւ Ֆիլաա Մալոյի

Le vendredi 6 juillet 2018 à 19h00

Ուրբաթ, 6 Յուլիս, 2018 երեկոյեան ժամը 7:00-ին
Հայ Աւետարանական Ա. Եկեղեցոյ մէջ

PREMIÈRE ÉGLISE ÉVANGÉLIQUE ARMÉNIENNE
11455 rue Daoust, Montréal, QC H3M 2S6 (Coin l'Acadie)



Avec la participation de
MME MARINÉ GRIGORYAN (SOPRANO)
M. ELIE BERBERIAN (TENOR)
M. GREGORY CHAHVERDIAN (PLANISTE)



Մասնակցութեամբ՝
Մարինէ Գրիգորեանի (սոփրանո)
Էլի Բերբերեանի (թենոր)
Դաշնասնորի ընկերակցութեամբ՝ Գրիգոր Շահվերտեանի

Pour billets et information
Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել

MS. MARINA GARABEDIAN 438.990.0009
MS. ANI DANIELIAN 514.887.7480
DR. SARKIS YERETSIAN 514.836.1562

Billets 45\$

Մուտքի նուէր՝ 45\$

ՄԱՆՐԱՆԿԱՐ Որոճում

Օդը սքանչելի էր։ Տարուևան ամենէն երկար օրը՝ ամրան առաջի՛ն օրը։ Կ’արժէր երթալ, տեղ մը նստիլ ու պաղպաղակ ուտել։

— Նայէ՛, Սեդան ալ կ’ուզէ՞ գալ մեզի հետ,— ըսի կնոջս,— ինքն ալ պիտի ուզէր օգտուելլ այս առիթէն։

— Յովիկեհնց ալ ըսեմ,— յարեց կինս։

Եւ ահա ժամադրուեցանք Janette et chocolat՝ մեր սիրած սրճարաններէն մէկը։ Ու՛ր գէթ անգամ մը չէ այ–ցելած մեր դրացի կղզեքաղաքի սիրտը հանդիսացող Metropolis շուկայական հսկայ տարածքի այս անկիւնը՝ խսկապէս վայելքէ մը զրկուած է։ Կ’ուզէ՞ք տուրմի, տուրմով պատրաստուած ալյազան ուտեստեղէններու՝ քաղցրեղէններու, տաք ու պաղ ըմպելիքներու կամ պաղպաղակներու տեսականիի շուայլանքի մը մէջ գտնուիլ՝ գէթ անգամ մը այցելեցէք այնտեղ։

Թէեւ սովորական ժամերէն բաւական կանուխ հասանք եւ տիկիները ձգեցինք ժամադրաւայրը՝ որ–պէսզի դարատափին վրայ սեղան մը ապահովեն, ես սակայն բաւական դարձայ՝ անծայրածիր կայանա–տեղիին մէջ տեղ մը գտնելու համար։ Ինչո՞ւ արգեօք այդքան խճողուած էք, տակաւին երեկոյեան եօթն իսկ չեղած՝ սկիզբը չհասկցայ։ Ամեն պարագայի երկու ան–գամ Մեթրոփոլիսի ամբողջ տարածքին չըջանը ըրի, յե–տոյ յանկարծ նկատեցի, որ մէկը կը պատրաստուէր մեկնելու, անմիջապէս գացի իր մօտ սպասեցի, լուսան–շաններս ալ աշխատցնելով, որ ուրիշ մէկը ինձմէ առաջ այդ տեղը չմտնէ։ Բոլոր նոր հասնողներն ալ ինծի պէս կը դառնային, կը չըջէին։ Աւելցնեմ, որ խոտերուն վրայ տեղ մըն էր, ասֆալթապատուած ալ չէր, սակայն ճար չունէի։ Բախտէս ալ սրճարանէն հեռու չէր։

Յովիկը նոյնպէս ուշացաւ, բայց ի վերջոյ ինքն ալ եկաւ ու բոլորուեցանք արդէն մեր կողակիցներուն կողմէ գրաւուած սեղանին շուրջ։ Հիմա նկատեցի, որ շատ մեծ բազմութիւն մը հաւաքուած էր ճաշարաննե–րով չըջապատուած այդ հրապարակին կեդրոնը՝ աւա–գանին մէկ կողմը, ու թմբուկներու եւ փողերու նուա–գախումբի մը առաջնորդութեամբ ալյազան մար–գանքներ կ’ընէին, կը պրկուէին, գետինը կ’երկնային, ոստուծով վեր կը ցատկէին ու տեւական կշռութաւոր շարժման մէջ կը գտնուէին։ Կ’երեւի ասոնց պատճառաւ կայանատեղին այդքան լեցուն էր, մտածեցի։

Սեղանին վրայ արդէն իսկ մեզի սպասող ճաշա–ցուցակներու տետրերը միայն իրենց մատուցման ձեւով

ու գունագեղ լուսանկարներով բերնիդ ջուրերը կը վազցնէին։ Ա՛լ չեմ ըներ խօսքը անոնց ընկերացող շող–շողուն բացատրութիւններուն ու բանաստեղծական թելադրութիւններուն, որոնց եթէ չանսաս՝ մեղաւոր կը զգաս…

Դժուարութեամբ կրցանք սահմանափակել մեր ապսպրանքները ու փոխանցել այնքան հաճոյակատար, կարմիր գդակաւոր սպասեակին, որ համբերութեամբ պատասխանեց մեր հարցումներուն ու յաւելեալ լուսա–բանութիւններ ալ տուաւ։

Մենք մէկ ականջով թմբուկներուն հետեւեցանք, միւս ականջով մեր առտնին խօսակցութեան, որ տեւա–կան բնոյթ ունի ի հարկէ, ներառելով Հայաստանն ու առկայ յեղափոխութիւնը, ազգային կեանքը, վարժա–րաններու հանդէսները, մեր թոռնիկներուն վկայուիլ–ներն ու պարգեւատրուիլները եւ այլն, եւ այլն։ Այլեւ տեղական ու միջազգային կեանք, մանաւանդ մեր հա–րաւի դրացիին զարտուղի նախագահին ըրածն ու չը–րածը։

Զգիտցանք ժամանակը ինչպէս սահեցաւ, ինչպէս մեր զարդարուն պնակներն ու պտուկները կամ թասերը եկան ու պարպուեցան։ Օդը քիչ մը ցրտեց։

— Ինքնաշարժին մէջ բաճկոն մը ունիմ, երթամ բերեմ,— ըսի ու տեղէս ելայ։

— Ես ալ գամ հետդ, քալած ալ կ’ըլլամ,— ըսաւ Յովիկ եւ ընկերացաւ ինծի։ Ինք ինձմէ առաջ անցաւ, ու ես ալ հետեւեցայ իրեն։

— Տես, ինքնաշարժս հոս՝ շատ մօտը կայանած եմ,— յարեց՝ մատնացոյց ընելով իրը։

— Իմս ալ հոն՝ դիմացը, խոտերուն վրայ է,— նկատել տուի։

Քալեցինք ուղիդ՝ մինչեւ կայանատեղիին սահ–մանը։ Հոն այդպէս իրարու քով նետուած պեթոնէ խո–րանարդներ ալ կային։ Հա՛, ասոնց մօտերը պիտի ըլլայ, մտածեցի։ Անցանք անոնք քովէն, յառաջացանք մար–գերուն վրայ, մէկկիկ–մէկիկ նայեցանք այնտեղ գտնուող ինքնաշարժներուն. իմս չկար։

— Վա՛յ, գողցած չըլլան,— խօսեցայ բարձրա–ձայն՝ արդէն ակներեւ կերպով մտահոգ։

— Սպասէ՛,— ըսաւ Յովիկ,— իմս հեռու չէ, երթամ բերեմ ու անով չըջինք։

Կայանատեղիի այդ բաժինը մի քանի անգամ դարձանք, մոգական բանալիովս ալ փորձեցի միանալ

ինքնաշարժիս, բայց ոչ մէկ տեղէ ձայն ելաւ։ Չափա–զանց ջղային դարձայ։

Ճիշտ այդ պահուն նկատեցի, որ սեւ, փոքր ինք–նաշարժ մը կը շրջէր ու մեզի մօտենալով դանդաղեցաւ։ Վրան մեծատառ Sécurité բառը ներկուած էր։ Ապահո–վական հսկողութիւն կը կատարէր։ Ձեռքով նշան ըրի, կանգ առաւ։

Երիտասարդ, գեղադէմ կին մըն էր, մազերը ձիու պոչիկի նման կապած։

— Կրնա՞մ օգտակար ըլլալ։

Բացատրեցի կացութիւնս. «Վախնամ, ինքնա–շարժ գողցուած է»,— ըսի։

Կինը ինքնաշարժիս թիւը առաւ, ինքն ալ նոյն շըջանը կատարեց, խոտերուն վրայ կայանուած բոլոր ինքնաշարժները ստուգեց ու վերադարձաւ։

— Վստա՞հ էք, որ հոս դրած էք,— հարց տուաւ։

— Այո՛,— ըսի,— ասանկ պեթոնէ քարեր կային, երկու հատին մէջէն անցայ ու խոտերուն վրայ տեղ գտայ։

Երբ ասիկա ըսի, հսկիչ օրիորդը մտաւ իր ինքնա–շարժը, նշան ըրաւ, որ հետեւինք իրեն, ու երկար շըջան մը ըրինք. շուկայական տարածքին ամբողջովին հակա–ռակ կողմը առաջնորդեց մեզ, բերաւ կանգնեցուց այդ երկու քարերուն առջեւ. հիմա յիշեցի, որ ասոնք բոլո–րակ էին ու կոնաձեւ, եւ ոչ խորանարդաձեւ։

— Հո՛ն է, հո՛ն է— բացադանչեցի՝ ուրախութենէս խենթացած։

Շնորհակալ եղայ այս ազնիւ կնոջ, անմիջապէս լուր տուինք մեր կողակիցներուն, որոնք տեւաբար կա–պի մէջ էին մեզի հետ, թէ ի՛նչ եղաւ. գտա՞նք ինքնա–շարժը, թէ՞ ոչ տակաւին։

Այդ պահուն, այդտեղ է, որ նկատեցի, թէ որքա՛ն մօտիկ էի դրած ինքնաշարժս մեր սրճարանին։ Ուղի՛ղ դիմացը, բայց որոշ հեռաւորութեան մը վրայ։ Այդ պատճառաւ ալ որեւէ նշանաձող չէի փնտռած, չէի կրնար սխալիլ վերադարձին։ Սխա՛լս. սրճարանէն ելլե–լով՝ ձիշտ հակառա՛կ ուղղութեամբ քալած էի՝ հետեւե–լով Յովիկին։

Լաւ դաս մը առած եղայ։

Բայց կեանքի մէջ ալ միշտ այդպէս չէ՞։ Որեւէ բան փնտռած ատեն, որեւէ հարց լուծած ատեն, հակա–ռակն ալ, հակառակ ուղղութեամբ ալ որոնելու չե՞նք…

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

«ՀՄԸՄ-ը ամբողջ դար մը մեր երիտասարդութիւնը դաստիարակեց» Հարցազրոյց ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբայր Մոսիկ Թօփուզեանի հետ

Հ.– Այս տարի ՀՄԸՄ–ի մեծ ընտանիքը, հայրե–նիքի թէ Սփիւռքի մէջ, կը ճշէ իր հիմնադրման հա–րիւրամեակը։ Ինչպէ՞ս համադրուած են այս առթիւ տեղի ունեցալիք նախաձեռնութիւնները, եւ ի՞նչ ձեռնարկներ կը կազմակերպուիին այս առթիւ Հա–յաստանի մէջ։

Մ.Թ.– ՀՄԸՄ–ի Կեդրոնական վարչութիւնը ինքն է, որ կը համադրէ ու կը հետապնդէ բոլոր միջոցա–ռումներն ու նախաձեռնութիւնները։ Անշուշտ յառա–ջացուցեր ենք զանազան յանձնախումբեր, որոնք մօ–տաւորապէս տարիէ մը ի վեր կը կազմակերպեն եւ կը համադրեն տեղի ունենալիք բոլոր ձեռնարկները։ Ինչ կը վերաբերի Հայաստանի մէջ կայանալիք ձեռնարկնե–րուն՝ շարքը բաւական երկար է։

Հայաստանի մէջ ձեռնարկները պիտի սկսին 19 Յուլիսին եւ պիտի տւեն մինչեւ 30 Յուլիս։ 19 Յուլի–սին տեղի պիտի ունենայ Համա–ՀՄԸՄ–ական 11–րդ բանակումի բացման հանդիսութիւնը Բիւրականի մէջ, նոյն օրը հոն յուշաքանդակի բացումը տեղի պիտի ու–նենայ, նշենք, որ ՀՄԸՄ–ի 90–ամեակին առթիւ Տէր Զօրի Հայոց ցեղասպանութեան համալիրին մէջ գետեղ–ուած էր յուշաքանդակ մը, որ Սուրիոյ պատերազմին ընթացքին քանդուեցաւ, այդ պատճառով Կեդրոնական վարչութիւնը որոշեց հարիւրամեակին Տէր Զօրի այդ յուշաքանդակին նախագիծով ալ յուշաքանդակ մը պատրաստել եւ գետեղել Բիւրականի մեր բանակավայ–րին մէջ։ 90–ամեակին շուրջ 100 մասնաճիւղեր ունէր ՀՄԸՄ–ը, հիմա արդէն 110–ի հասած է։ Մասնաճիւղե–րուն անունները եւ հիմնադրութեան թուականները այդ յուշաքանդակին վրայ պիտի գետեղուին։ Ամսուն 20–ին Ծիծեռնակաբերդի մէջ նախատեսուած է դրօշակի բացման արարողութիւն, ապա Ծիծեռնակաբերդի յու–շահամալիրին մէջ ՀՄԸՄ–ի իրերու ցուցահանդէսի բա–ցում, այս առթիւ ՀՄԸՄ–ի դրօշակը մէկ շաբաթ պիտի ծածանի թանգարանին առջեւ, որմէ ետք պիտի յանձն–ուի թանգարանին, իսկ թանգարանին կողմէ եռազոյն դրօշ մը պիտի յանձնուի ՀՄԸՄ–ին, որպէսզի գետե–ղենք զայն Լիբանանի ՀՄԸՄ–ի Կեդրոնական վարչու–

թեան թանգարանին մէջ։ Նոյն օրը տեղի պիտի ունե–նայ ջահավառութիւն եւ ծառատնկում. ջահավառու–թիւնը պիտի ըլլայ 3 երկիրներէ բերուած ջահերով, մէ–կը Փարիզէն, ՀՄԸՄ–ի հիմնադիրներէն Գրիգոր Յա–կոբեանի գերեզմանէն, երկրորդ ջահը պիտի գայ Պոլի–սէն, նոյնպէս ՀՄԸՄ–ի հիմնադիր Յովհաննէս Լոդեանի գերեզմանէն, երրորդ ջահը Լիբանանի Նահատակաց մատուռէն, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառին կողմէ։ Երեք ջահերը պիտի բերուին, եւ ջահավառումը պիտի կատարուի, որուն ընթացքին ծառատնկում ալ տեղի պիտի ունենայ՝ հողին խառնելով այդ երեք երկիրներէն բերուած հող։ Յուլիս 21–ին ՀՄԸՄ–ի հիմնադիրներուն քանդակի բացում նկատի առնուած է, ՀՄԸՄ–ՀԱՍԿ Կեդրոնական վարչութեան կեդրոնի մոտքին։ Ամսուն 21–ին Հանրապետութեան Հրապարակին մէջ տեղի պի–տի ունենայ տողանցք՝ Համա–ՀՄԸՄ–ական 11–րդ բանակումի մասնակիցներուն կողմէ, որոնց թիւը ար–դէն 1200–ի հասած է։

Կիրակի, 22 Յուլիսին, Եռաբլուր պիտի այցելենք, ուր հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ար–ցախեան պատերազմի զոհերուն յիշատակին։ 23 Յուլի–սին ՀՄԸՄ–ի սկսուտական շարժման հիմնադիր Վա–հան Չերազի արձանի բացումը պիտի ըլլայ Կիւմրիի մէջ, Վահան Չերազի անունով կոչուած պողոտային վրայ։ Հոս ուրախութեամբ կ’ուզեմ նշել, որ Գանատայի շըջանը ստանձնեց կնքահայրութիւնը այդ արձանի գետեղման, որուն արժեզինը մօտաւորապէս 30000 տո–լար է. այս մէկը իսկապէս մեծ պատիւ է Գանատայի շըջանին համար։ 24 Յուլիսին հանրային պաշտօնական հանդիսութիւն՝ Օփերայի դահլիճին մէջ եւ պաշտօնա–կան ընթրիք՝ Ֆլորանս ճաշարանին մէջ, որուն հրաւիր–ուած են Հայաստանի Հանրապետութեան նախագահն ու մեր երկու վեհափառները։ 25 Յուլիսին նկատի առած ենք գիտաժողով մը՝ նուիրուած ՀՄԸՄ–ի հիմ–նադրութեան։ 26 Յուլիսին պիտի կատարենք ՀՄԸՄ–ի 100–ամեակին նուիրուած նամականիշի մեկնարկը։ 28 Յուլիսին դրօշակի փակման արարողութիւն տեղի պիտի ունենայ Ծիծեռնակաբերդի մէջ, ինչպէս նաեւ Բիւրա–

կանի մէջ բանակումի փակման հանդիսութիւն։ Եւ վեր–ջապէս, 29 Յուլիսին՝ հանրային փակման ճաշկերոյթ, Փարաւոն ճաշարանին մէջ։ Սոյն ձեռնարկներուն նա–խահաշիւն է 400,000 տոլար։

ՀՄԸՄ–ը ամբողջ դար մը մեր երիտասարդու–թիւնը դաստիարակեց, ոգեշնչեց եւ գօտեպնդեց, իր սկսուտական եւ մարզական շարքերով, հետեւաբար մեր պարտականութիւնն է արժանաւայել կերպով նշել 100–ամեակը։

Հ.– Իսկ մեծն Մոնքրէալի մէջ ինչպիսի՞ ճախա–ձեռնութիւններ նկատի առնուած են այս առթիւ։
Մ.Թ.– Գանատայի մէջ Շըջանային վարչութիւնը երկու ձեռնարկ նկատի ունի՝ Նոյեմբեր ամսուան վերջա–ւորութեան, մէկը Մոնթրէալի, իսկ միւսը՝ Թորոնթոյի մէջ։ Մեծն Մոնթրէալի պարագային անշուշտ Մոնթրէ–ալի եւ Լաւալի մասնաճիւղերու մասնակցութեամբ, իսկ Թորոնթոյի պարագային՝ Օնթարիոյի մասնաճիւղերուն։ Այս առթիւ Շըջանային վարչութիւնը հրաւիրած է Կեղ–րոնական վարչութեան ատենապետը։ Պաշտօնական հանդիսութիւնները պիտի ընդգրկեն բանախօսութիւն, խօսքեր, գեղարուեստական բաժին եւ հաւանաբար՝ պարգեւատրումներու ալ բաժին մը։

Հ.– Նոր սերունդիին կազմակերպման եւ դաստ–իարակութեան ծիրէն ներս միշտ ալ մեծ դերակատա–րութիւն ունեցած է ՀՄԸՄ–ը։ Ինչպէ՞ս կ’արժեւորէք այդ առնչութեամբ ներկայիս տարուած աշխատանք–ները։

Մ.Թ.– Այս ուղղութեամբ մեր լիազումարներուն ընթացքին յաճախ նման հարցեր կ’արծարծենք։ Վերջին լիազումար ժողովին, որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 2017–ին Երեւանի մէջ, որոշեցինք կազմակերպել երի–տասարդական համագումար մը, որ նկատի առնուած է 2019–ի Մարտին։ Այս համագումարը կը միտի ունկնդ–րել միութեան շարքերուն մէջ գործած եւ գործող երի–

ՀՄԸՄ... Ծար. էջ 10

Ես իսլամացած հայի քրիստոնեայ գաւակ եմ՝ Կարօտ Սասունեան

Ծնունդով Սասունից, այժմ Դիար-բեքիրում (Տիգրանակերտ) բնակուող Կարօտ Սասունեանին մանուկ հասակում մայրն ուղարկում էր մզկիթ, որպէսզի արաբական տառերը սովորի՝ մտածելով, որ եթէ երեխան մեծանայ որպէս մահմեդական, ապա ատելութեան ու վրէժխնդրութեան զգացում չի ունենայ:

